

Ա. ՄԱԹԵՎԱԼՈՅՑԻՆ

# ՑԱՆՈՎԻ ԽՈՏԱԲՈՒՅՑՍԵՐ



633.2  
Մ-15

25.02.2013

633.2

Ա. ՄԱԹԵՎՈՅԱՆ

Մ-15

մշ

# ՑԱՆՈՎԻ ԽՈՏԱԲՈՒՅՍՍԵՐ

1006  
29478

3081



1934

ԶԵՐԵՎԱՆ

## ԱՌԱՋԱԲԱՆ

«Անասնապահության գործն իր ձեռքը պիտի վերցնի ամբողջ կուսակցությունը, մեր վողջ աշխատավորությունը—թե կուսակցականները և թե անկուսակցականները, ի նկատի ունենալով գոր այժմ անասնապահության պլորեմն այնպիսի առաջնակարգ պլորեմն ե, վորովիսին յերեկ յեղեկ և արդեն հաջողությամբ լուծված հացահատիկային պլորելեմը» (ՄՏԱԼԻՒՆ):

Խորհրդային Միության և նրա անբաժան մասնիկ կազմող Խորհրդային Հայաստանի եկոնոմիկան որ որի վրա աճում է փոխվել և նրա քարտեղը, ազգարային հետամաց Հայաստանը դարձել և ինդուստրիալ ագրարային յերկիր—ստեղծվել են խոշոր ինդուստրիալ գիգանտներ, այն ե՝ պղնձարդյունաքերություն, Ցեմենտներ, Կառուցուկը, Զորագեսք, Քանաքեռներ, Կոնչերվշինը և այլն, և այլն, վորոնց մի շարք պահանջները բավարարելու դուգընթաց վերակառուցվում և մեր սոցիալիստական գյուղատնտեսությունը:

Հայաստանի 26 շրջաններից 20-ը հարուստ են բնական խոռոչարքներով, ալյուրն արտաներով և անասնաբուծության զարգացմանը միանդաման նպաստող կլիմայով:

Լոռին, Սիսիանը, Աղբարան, Ապարանը և այլն, իրենց ընդարձակ արոտներով, խոռոչարքներով և կլիմայով, դասվում են Խորհրդային Միության անասնապահական առաջավոր շրջանների շարքում։ Եղանակություններ, վորտեղ արդյունաբերուկան անսնաբուծությունն ստեղծելու բարակ նախապայմանները կան:

Խոշոր դեր են խաղում անասնաբուծությունը մյուս՝ այսպիս կոչված տեխնիկական կուլտուրաների շրջաններում։ Բամբակացան, այգեգործ, բանջարաբուծ գյուղացիները նույնական կարիք են զգում կաթնամթերքների:

Բանվորական կենտրոնների (Յերևան, Ղափան, Ալլահերդի և այլն) բնակչությանը թարմ կաթնամթերքներով սպասարկելու գործում, խոշոր ե անասնաբուծության դերը։ Մեր կուսակցու-

Պատ. խմբագիր՝ Հ. Միլտեյան  
Մասն. խմբագիր՝ Մ. Թումանյան  
Մըբագրիչ՝ Խ. Խյալզյան  
Հանձնվել ե արտադրության 1934 թ. մայիսի 8-ին  
Մտորագրվել ե տպագրելու 1934 թ. մայիսի 21-ին  
Դրամիլլ թ 225, ամբաժ 2000, պատվեր թ 326

Թյունը հաջողությամբ լուծեց հացտհատիկային և տեխնիկական կուլտուրաների պրոբլեմը, ամենակարճ ժամանակում կլուծի նաև անասնաբուծության պրոբլեմը: Ընկ! Ստալինն առուժ ու «Մենք ունենք պարզ նշաններ, վորոնք ցույց են տալիս մանր, ցածր ապրանքայնություն ունեցող տնտեսությունների» անկայունությունը և տնտեսական անհօւսալիությունն անասնապահության ասպարիդում: Ցեվ իրոք, մանր, փոքրած տնտեսության անասնապահության գլխավոր վատանգն այն և, վոր թույլ չի տալիս և չի ապահովում անասնաբուծության հետագա աճումը և արդյունավետությունը: Դրանից պետք և հետեցնել, վոր արդյունավետ, բարձր ապրանքային անասնաբուծություն ստեղծելու միակ ուղին—սոցիալիստական ուղին և—սովորողներ և կոլխոզներ կազմակերպելու ուղին:

Դասակարգային թշնամին, կրնզրատեսականները և աջ ովորտյունիստները գտնում եյին, վոր անասնապահական կոլխոզներ կազմակերպելն անհնարին և, վոր միակ յելքը կուլտակային տնտեսություններն են: Սակայն, կուսակցությունը, հակառակ այդ վայնասունների, կարճ ժամանակում հսկայական նվաճումներ ձեռք բերեց անասնաբուծության սոցիալիստական վերակառուցման ասպարիդում և ապացուցեց, վոր դարձացման միակ ուղին—անասնապահական սովորողներ և կոլխոզներ կազմակերպելու ուղին եւ:

Հիրավի, միայն խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների միջոցով կարելի յեւ ստեղծել արդյունավետ անասնաբուծություն, նրանց միջոցով և հնարավոր կազմակերպել անասունների ուսցիչնալ խնամքն ու կերը և արոտների ու խոտհարքների: բարելավումը: Մեզ մոտ, Անդրկովկասում, անհատական մանր, փոշիացած, ցիր ու ցան տնտեսությունների հետամնաց անասնաբուծությունը վողորմելի արդյունքներ և ստանում, յեթե համեմատելու լինենք ուրիշ ինքնների անասունների արդյունավետության հետ:

Որինակ՝ գանիստական մեկ կովը, տարվա ընթացքում, մատավորապես չորս անգամ ավել կաթ և տալիս, քան Անդրկովկասի մի կովը: Ավելին չեր կարելի պահանջել գարմանով կերակրիող կիսաքաղց կովից: Այս յերեւութը բացատրվում է կոշտով, վոր Դանիայում՝ մեկ գլուխ խոշոր անասունին՝ մառանով, վոր կերական շրջանում հասնում է 10—12 ցենտներ բային կերակրման շրջանում հասնում և 10—12 ցենտներ կերախմային եկվովալնու այն ժամանակ, յերբ մեզ մոտ միայն 2,5 ցենտներ եւ:

Գործն այս ձեռվ շարունակել յերբեք հնարավոր չեւ: Գյուղատնտեսության ասպարիզում, անասնաբուծության խնդիրը մեր աշխատանքի, մեր ուշագրության հիմնական առանցքը պիտի կազմի:

«Յերկրորդ հնդամյակում, անասնաբուծության բնագավառում, պետք են նվաճել հոտերի ավելացում, բարձրացնելով նրա ապրանքային արտադրանքն այնպես, վոր համապատասխանի և լուծի հիմնականում անասնաբուծության պրոբլեմը ԽՀՄ-ում—ինչպես այդ հացահատիկների պրոբլեմի նկատմամբ կատարեց կուսակցությունն առաջին հնդամյակում»: (17-րդ կուսկոնֆերանս):

1934 թիվը պետք եւ և կարող եւ դառնալ ամբողջ անասնապահական տնտեսության վերելքի բեկման տարի»: (17-րդ համագումար, ԱՏԱԼԻՆ):

Կոմկուսակցության այդ մարտական ու կարեոր խնդիրը—սոցանասնապահության հետագա աճումն ու ամրացումը, մեր բոլորի ուշագրությունն և հրավիրում սաեղծելու կերի կայուն բազա, առանց վորի յերբեք հնարավոր չեւ լուծել սոցիալիստական անասնաբուծության պրոբլեմը:

Կերի խնդրին մինչև հիմա Հայտստանում հարկ յեղած ուշագրությունը չի դարձված:

«Թենյեվ ցանովի խոտերի քանակը նմանապես մի փոքր ընդարձակվեց, այնուամենայնիվ դեռ շատ հեռու յենք այն դրությունից, յերբ կարելի կլինի ասել, վոր անասունների հոռան ամբողջ տարվա ընթացքում արդեն ապոնովված և անհրաժեշտ քանակի և վորակի խոտով ու կերով»: (ՀԿ(Բ)Կ 9-րդ համագումար, Ա. ԽԱՆՉՅԱՆ)

Հանրածանոթ եւ այն դրությունը, վոր դեռ ձմռան կեսին սպառվում եւ տնտեսության կերի պաշարը, վոր գյուղացին տառապակ կիլոմետրեր և անցնում, դեռ ու դեռ և ընկնում կեր ձեռք բերելու համար: Սակազ չեն այն գեղագերը, յերբ գյուղացիներն ստիպված են լինում ձմեռը—ձյունի տակից խոտի մացորդներ, տերեւներ ու թփեր հանել անասուններին սովից ազատելու համար: Այս ամենի հետեւանքն այն և լինում, վոր գյուղացին գործառն անասուններին դուրս եւ բերում գոմից վորպես կենդանի դիակներ:

Վորմնք են կերի աղբյուրները Հայտստանում:—Այդ նոր ընդարձակ արտոններն ու խոտհարքներն են, վորոնք մինչ հեղափոխությունը մի խուժը կալվածատերերի և անհատական—քոչ-

վորական տնտեսությունների կողմից բարբարոսաբար սպառդործելու հետեւանքով, ուժառագառ են դարձել, կորցրել են իրենց բարձր բերքատվության վորակը, վորխնի (դեպի վատը) բուսաբանական կազմը, շատ լեռնուլանջեր խսդառ զրկվել են բուսականությունից։ Մինչև հիմա շատ քիչ՝ համարյա աննկատելի աշխատանք և կատարված բնական հարուստ այդ արոտների և խոտհարքների բարելավման անպարփում։

Կերի յերկրորդ հիմնական աղբյուրը՝ ցանովի խոտերն են ի՞նչպես և զրված այդ գործը մեզ մոտ՝ Հայաստանում։

1930 թ. 1931 թ. 1932 թ. 1937 թ.

ըստ 2-րդ

հսկամյակի

պլանի

Ցանովի կերաբույների			
ապահովությունը . . .	5,500 հեկա.	9,000 հեկա.	20,000 հեկա.
Հայաստանի բույր ցան-			80,000 հեկա.
քերի գոր 0% և կազմում	1,50/0	3,50/0	—

Այս թվերը ցույց են տվելիս, վոր դյուղատնտեսական անսակետից անասնապահական յերկիր Հայաստանը բավարարվել է կերաբույների տարածության  $1,50/0 - 3,50/0$ -ով։ Թվերն ապացնեցում են, վոր անասնապահության ապրանքայնությունը Հայաստանում վորքան ցածր և յեղել և վերջապես, թե մեր ուշադրությունից վարքան դուրս և յեղել անասնապահությունը կերպ ապահովելու խնդիրն առաջին հնդամյակում։

Յերկրորդ հնդամյակում անասնապահության համար կերե կայուն բազա ստեղծելու գործում մեծ դեր և խաղաղու խոտացանությունը 1937 թվին 80,000 հեկտար խոտի ցանք կատարելու պլանը միանգամայն սեալ է։ Մենք բոլոր նախապայմաններն ու միջոցներն ունենք այդ պլանն իրագործելու համար։

Ուրեմն կերի խնդիրը լուծելու համար անհրաժեշտ և նախը բարելավել բնական խոտհարքներն ու արոտները, և յերկրորդ անցնել խոտացանության։

## ԷԶՉ ՆԵՍՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԽՈՏԱՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Անասնապահության հսկա աճումը մեր առաջ գնում է կերի ապահովման խնդիրը։ Բնական խոտհարքները չեն ապահովում պահանջվելիք կերի բազան։ Ուրիշ յերկրների, մասնավորապես Ամերիկայի, անասունների բարձր արդյունավետության «գաղղանիքներից» մեկն ել անասունների կերի ուսցիունի խոշորագույն մտար կաղմող՝ խտացրած և հյութալի կերն ե, իսկ խտացրած կերերի մի մասը և ամբողջ հյութալի կերը մենք կարող ենք միայն ստանալ կերաբույներ ցանելու միջոցով։ Ուրեմն խոտացանությունը ենթառարյանն ապահովամ և բազմակրոնանի կերով։

2. Խոտացանությունը բարձրացնում և նոյնի բերքատվությունը, նարսացնում և նոյն՝ բույսերին անհրաժեշտ սննդառու նյութերով՝ ազատով և այլն։

Ազատ շատ կտ գոմազրում և վորիշ հանքային պարաբառայութերում, որինակ՝ չիլիական սելիտրայում, ցիանամիզում և այլն։ Հողում, վորից ըույսը սնվում է, աղոտ շատ քիչ և գտնվում, մինչդեռ ողի խոշորագույն մասն աղոտ է։ Բայց ցանք այն ե, վոր բույր կուլտուրական բույսերը չեն կարողանում ողավել ողի այդ ձրի հարստությունից, բացառությամբ թիթեռնածաղիկներից (ավալոյա, վիկ, կորնդան, սոյա, լոբի և այլն)։

Յեշ ահա, վերոհիշյալ խոտաբույները, մյուս կուլտուրական բույսերին՝ աղոտ մատակարարելու գործում, ողնության են գալիս։

Ահա ինչպես և կտարվում այդ ամենը։ Առվույսի, վիկի, կորնդանի արմատների վրա շատերը նկատած կիրանին պալարիկներ, վորաեղ զտնվում են բազմաթիվ բակտերիաներ, վորոնք հասարակ աչքով անտեսանելի յեն։

Այդ բակտերիաներն ողից վերցնում են մեծ քանակությամբ ազատ իրեն սնունդ։ Թիթեռնածաղիկ բույսերը, վորոնց արմատների վրա ապրում են այդ բակտերիաները, սկսում են սնվել ազատային բաղադրություններով։ Ողտագործելով ողի աղոտը, թիթեռնածաղիկ բույսերն աղոտային մասերը կուտակում են իրենց

անքիներում, ցողուններում, արմատներում և այլն։ Բույսերը հուվաքելուց հետո, յերբ հողը վարում ենք, տերևների, ցողունների ու արմատների մասցորդները մնում են հողում ու քայքայվելով, դառնում են սքանչելի սնունդ հաջորդող բույսերի համար, բարձրացնելով նրանց բերքը։

3. Հացահատիկային բույսերը և ուրիշ շատ բույսեր զարգացնում են իրենց արմատային ցանցը միայն հողի վերին շերտում և յերկար տարիներ ոգտագործելով այդ շերտը, ուժասպառ են դարձնում հողի այդ մասերը։ Սակայն կերպույսերից տովույթը յեվ կորնկանը՝ օնարիսիլ խորք զնացող արմատների, սնկում են հողի ներքին շերտից, վորդց չեն ոգտնում մյուս բալսերը։

4. Մեր դաշտերը շատ են վարակված մոլախոտերով, վորոնք հանդիսանում են ցածր բերք ստանալու պատճառներից մեկը։ Վայքարը մոլախոտերի դեմ կարելի յետ տարբեր տեսակ կաղմակերպել։ որինակ՝ ցելերի կամ շարքաներկ կուլտուրաների միջոցով։ Մոլախոտերի դեմ պայմանական միջոցներից մեկն ել խոտացանությունն է։ Առվույտից և կորնկանից հետո դաշտը մաքուր ել լինում մալախոտերից։

5. Խոտացանությունը հնարավորություն ե տալիս պարագ՝ խամ շրադնել հողերը։ Մեր յերկրագործական սակավաջուր շրջաններում հողամասերը վորոշ տարիներից հետո թողնվում են վորոշեցել՝ խոնավություն կուտակելու և այլ նպաստավոր պայմաններ ստեղծելու համար։ Վորպեսզի այդ տարին ցելահաղամասի բերքից, շղրկվեն, նույն հողում ցանում են մի վորևե խոտաբույս, որինակ վեկ, վորը տալիս ե առատ խոտ և բարձրացնում և հողի բերքատվությունը։

6. Ցանելով կերպույսեր, այն ե՝ արմատապտուղներ, սիլուսարույսեր և խոտաբույսեր, հնարավորություն ենք տալիս տընտեսությանն ստեղծելու աշխատանքների ողանային գառափորում, վորովհետև որանց ցանքը, ինամքը, հագաքը և այլն, չի դուգողիպում հացահատիկներին և թույլ ե տալիս քիչ բանվարակուն ուժով շտա աշխատանք կատարել։

7. Խոտացանությունը հնարավորություն ե տալիս ոգտագործել բարեառա յեվ չոր հողեր, վորեն ուրիշ բալսեր չեն կարողանում զարգանալ։

8. Ցերաշար, չոր յերկրագործական շրջաններում, բազակառին մեծ քանակությամբ բերք և խում մեղանից դեղքեր են

լինում, յերբ յերաշախ շնորհիվ չի ստացվում նույնիսկ ցանած սերմը։ Յերաշ վ դեմ պայմանական միջոցներից մեկը խոտացանությունն է։

9. Այսպիսով, խոտացանության միջոցով, նպաստում ենք անտեսապահության պրաբլեմի լուծմանը, ստեղծելով ամուր կերի բազա, որա նես միտսին լուծում ենք բերքատվության բարձրացման պրոբլեմը։

## Ա Ր Վ Ո Ւ Յ Տ Տ

**Առվույտը շատ հին բույս է:** Պարսկաստանը, վորը հանդիպանում և առվույտի հայրենիքը, դեռ 2000 տարի առաջ (մինչ մեր առեղջությունը) մշակել ե այդ կուլտուրան: Այն ժամանակ Պարսկաստանում և Փոքր Ասիայում եյին բացառապես վորպես ծիռ կեր Զիարությունը՝ կամլիոծ պատերազմական հաճախակի գործողությունների հետ, բավականին զարգացած եր Հույն-պարսկական պատերազմի շնորհիվ, առվույտը Պարսկաստանից Հունաստան և անցնում 470 թվին. առա 16-րդ դարում նոր միայն սկսում և առաջիկել յելքուղական պետություններում, վորտեղից իշ մուտք և գործում թուաստան թե վաղուց և արդյոք ինչ մըշակվում է առվույտը մեզ մոտ՝ Անդրկովկասում և մասնավորապես Հայաստանում—ոգիշտը և ասել. սակայն առվույտի վայրի տեսակները, վորոնք տարածված են մեզ մոտ՝ սկսած բամբակացան շրջաններից մինչև լեռնային շրջանները, գալիք են ապացելու, վոր Հայաստանում շատ վաղուց ե, ինչ մշակվում է և առվույտը և թերեւ նրա հայրենիքն և հանդիսանում Պարսկաստանի հետ միատեղ:

**Առվույտը բաղմամյտ բույս է,** միևնույն հողամասում մնում և բերք և տալիս 8—15 տարի: Նայած տնտեսության թեքմանը և հողային ու կիմայական պայմաններին, կարող ե մնալ միևնույն տեղում նույնինք մինչև 20 տարի:

Լավ զարգացած առվույտի թուփին ունի 20—25 կանգուն ցողուն, 0,5 մինչև 1,0 մետր բարձրությամբ: Յողունները պատաժ են լինում մազմուկներով, բայց կան տեսակներ ևս, վորոնք բուրովին մերկ են: Տերեները յեռակի յեն, յերկարավագուն, հաճախ ձվածեն և շատ խիտ դասավորված: Ծաղիկները մանիշակագույն և դեղնագույն են, վողկույզաձև դասավորված ծաղկափթթություն են կազմում: Պտուղն առվույտի պատիշ կամ ունի և վոլորածել մամղաղանման, վորտեղ տեղավորված են մի քանի հատ մամղաղանման վերաբերման ուղարկելու:

**Առվույտը հայանի յե իր շատ խորը թափանցող արմատներով.** սովորաբար սրանց յերկարությունը 1,5—2 մետր և, սակայն հետազոտությունները ցույց են տալիս, վոր արմատների յերկարությունը հաճախ համար 7,5—13 մետրի, նույնինք 20 մետրի: Ունի հիմնական մեկ, համեմատաբար հաստ արմատ, վորից տարածվում են գեղի 2 կողմերը բարակ արմատիկներ, վորոնք դարձայի մուռ ուղղված են գեղի ներքեւ: Արմատների յերկարությունը և յալ ուղղված են գեղի ներքեւ: Արմատների յաղաքական ավելի բարձր սարգում է հանգույցից, վորը գանվում է հողի վերին շերտում: Արմատային հանգույցից և, վոր զարգանում են նոր ցողունները Յուրաքանչյուր քաղցից հետո, ցողունները մահանում են և արմատային հանգույցից դուրս են գալիք նոր ցողուններ:

**Առվույտի շատ տեսակներ կան, վորոնք հայտնի յեն խռովացանության մեջ.** որինակ Քրանսիական, Թուրքեստանի և այլն. դրանցից մեզ մոտ կա ու լավ բերք և տալիս առվորական մանիցակագույն ծաղիկներով առվույտը, վորը կարող է և Քրանսիական ծաղկում ունենալ և Թուրքեստանի: Ընդհանրապես մեզ մոտ մեծ տեղ պետք է տալ Թուրքեստանի առվույտին, վորի ծաղման վայրը, տյապես թե այնպիս, նմանվում է Հայաստանի պայմաններին: Բավական շատ են վայրի առվույտի տեսակները մեր արաներում ու մարգագետիններում: Հատկապես դեղին ծաղկով առվույտը միանգումայն հարմար և մեր սպեցիֆիկ պայմաններին —ցրտին, յերաշտին և հողային պայմաններին: Ուստի անհրաժեշտ և ուշադրություն դարձնել բաղմացներու և լավացնելու այդ տեսակները:

**Հայաստանում առվույտը տարածված է ու խռովացանության մեջ հայտնի յե դաշտավայրերից սկսած մինչև նախալեռնային ունույնինք լեռնային շրջաններում՝ ջրովի պայմաններում: Զնոյած գրականության մեջ ընդունված է, վոր առվույտի շրջանները զուգական մանիշակագույն խաղողի զարգացման շրջաններին, սակայն մենք առաջիպս ենք Փաշալիքի, Բասարգեչարի, Ազարանի և այլ և նային շրջանների առվույտի ցանքերին:**

**Կունային շրջաններում, ճիշտ ե, սովորական առվույտն այն բերքը չի տալիս, ինչ զաշտավայրերում, սակայն այդ շրջանների կիմայական պայմաններին համապատասխանող առվույտի տեսակները յերիկամունքածեն ուրիմեր:**

## ԱՌՎՈՒՅՏԻ ՏԵՂԸ ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԶ

սակները կարող են մեծ բերք տու. որինակ՝ դեղին կամ շվերական առվույտը. այս տեսակը կա Անդրկովկասում, մեզ մոտ՝ Հայաստանում, վայրի գրության մեջ:

Այդ առվույտն արժանի յեւ ուշադրության այն շրջանների համար, վորտեղ սովորական առվույտը՝ կլրսայական պայմանների շնորհիվ, հնարավոր չի լինում ցանել կամ թե բերք չի տալիս:

Դեղին առվույտը չափից գուրու յերաշտին ու ցըտին դիմացող բույս ե. դիմանում ե ամենաուժգին, չոր սառնամանիքներին, բայց տալիս ե ավելի պակաս բերք: Մյուս կողմից, դիմանում ե տմառային տաք յեղանակներին: Ծնորհիվ իր խորաթափանց արժաների, շատ յերկար ե դիմանում յերաշտին:

Հաշվի առնելով դեղին առվույտի այդ յերկու հատկությունները, միանգամայն հնարավոր ե այն տարածել մեր լեռնային և սոկավաջուր գաշտային շրջաններում. որինակ՝ Բասարգեչարում, Մարտունիում, Աղբաբյում, և այլն:

Մյուս խոտարույսների համեմատությամբ դեղին առվույտը տալիս ե շատ բարձր վորակի կանաչ ու չոր կեր հայտատանում մշակվող առվույտի անսուկներն աչքի յեն ընկնում իրենց ցրտադիմացկունությամբ, տալիս են առատ բերք: Դաշտավայրերում հնագույն առվույտը անդամ, նախալեռնային շրջաններում 2—3 անգում: Ամերիկայում առվույտն ոգտագործում են նաև սիլոսի համար, բարձրացնելով նրա վորակը: Բացի այդ, այստեղ առվույտի խոտից պատրաստում են ալյուր, դրանով շփոթի ձեռվ կերակրում են հորթերին, խոզերին, այլև մեծ քանակությամբ ոգտագործում են թոշնաբուծական անտեսություններում:

Առվույտը հողի նկատմամբ պահանջիու չի, լավ բերք ե տալիս ամեն ենակի հոգերում, չի սիրում ուստի խոնավ (զինա) յիկ բարեարա հողերը:

Առվույտը լավ ե զարգանում տաք կլիմայական ուստի մաններում. ծովսինյա յեղանակները, անձրևները, մատախուղներն առվույտի վրա գառ են անդրադառնում:

Առվույտի արմատների վրա գտնվում են պալարիկներ, վորտեղ առրում են բազմաթիվ բակտերիաներ. այդ բակտերիաների շնորհիվ առվույտը հարստացնում է հողն ապուզի:

Առվույտից հետո, բոլոր բայսերը մեծ բերք են տալիս. ներառյան առվույտը հիմնայի նախորդող բույս ե:

Գյուղատնտեսական վորձը ցույց ե տալիս, վոր միննույն կուլտուրան ամեն տարի միկնույն տեղում ցանկով, տարեց տարեք գցում ե տվյալ կուլտուրայի բերքը: Գյուղացին իր տանայակ տարբիների վորձից յենելով՝ միշտ սահմանում ե կուլտուրաների վորոշ հաջորդականություն:

Գյուղատնտեսության մասնագիտացումը, վորը հանդիսանում ե պլանային անտեսության հիմնական խնդիրներից մեկը, պահանջում ե առանձին մասնագիտացած շրջաններից ու տնտեսություններից՝ հողային տարածությունների ամենախույզը մասը հատկացնել առաջավոր կուլտուրային. որինակ՝ հացահատիկային շրջաններում կամ անտեսություններում՝ հացահատիկներին բամբակացան շրջանում կամ տնտեսություննում ամենախոշոր մասը՝ բամբակին:

Այդ պահանջն անշուշտ պետք ե կապել վորոշ հաջորդականության հետ. որինակ՝ բամբակի կուլտուրան 4—5 տարուց հետացնքաշրջանառության կարգով պետք ե տեղի տա առվույտին և այլն:

Ցանքաշրջանառության ընթացքում հնարագորություն և ստեղծվում լրիվ ողտագործել հողի բոլոր ընդունակությունները՝ բարձր բերք ստանալու համար Բոլոր բույսերն իրենց անման համար պահանջում են լույս, ջերմություն, խոնավություն, ոդ և անդամար նյութեր, սակայն տարբեր քանակությամբ, տարբեր ձևերով ու տարբեր ժամանակում:

Որինակ՝ խոնավության նկատմամբ բոլոր բույսերը տարբեր պահանջ են ներկայացնում, հետևապես շատ խոնավություն պահանջող բույսը պետք ե հաջորդի քիչ խոնավություն պահանջող բույսին: Կամ թե տարբեր բույսեր, հողի տարբեր շերտերից հետանում խոնավություն, որինակ՝ հացազգիների արմատները գտնվում են միայն հողի վերին շերտում, հետևապես ոգտվում են վերին շերտից, մինչդեռ առվույտի արմատները յերբեմն թափանցում են հողի մեջ նույնիսկ 15 մետր խորությամբ և ոդտվում են բոլորովին այլ շերտից:

Տարբեր բույսերն իրենց բերքի հետ տարբեր քանակությամբ սննդաբար նյութեր են տանում հողից (աղոտ, կալի, ֆոսֆոր և այլն). որինակ՝ շաքարի ճակնդեղը, կերաբույսերը և դեղատուրույները՝ 2—3 անգամ ավելի կալի յեն վերցնում հողից, քան հացահատիկները:

Տարբեր բույսեր տարբեր ձևով են աղդում հողի ֆիզիկական հատկության վրա: Շատ բույսեր խախտում են հողի կառացածքածքը, փոշիացնում հողը, խախտում են ջրային և ողային փոշիանակությունները: Սակայն կան բույսեր, որինակ՝ կերպույժանակությունը, վորոնք, ընդհակառակը՝ վերականգնում են, հողի հնձկային ռերը, վորոնք, ընդհակառակը՝ վերականգնում են, հողի հնձկային ռերը, վորոնք, ընդհակառակը՝ վերականգնում են, հողի հնձկային ռերը:

Բոլոր բույսերն աղքատացնում են հողը մննդարար նյութերից: իսկ թիթեռնածաղիկը բույսերը, վորոնց մեջ մենում են նաև առվույտը, վիկը, կորնգանը, յերկնուկը, ընդհակառակը՝ հողը հարստացնում են աղոտով, որի անսպառ աղբյուրի հաշվին:

Վերջապես, հողում յեղած մոլախոտերի դեմ պայքարելու գործում, տարբեր բույսերի դերը տարբեր ե. շարքահերկ բույսերը, չորհիկ միջարքային մշակության, խապատ վոչչացնում են ըը, չորհիկ միջարքային մշակության, խապատ վոչչացնում են մոլախոտերը: Մոլախոտերի գեմ պայքարելու գործում մեծ դեր են խաղում նաև արագ ու խիտ աճող բույսերը, վորոնք խեղում, փշացնում են մոլախոտերին, որինակ՝ կերպույժերը:

Հետևապես մոլախոտերի դեմ ակտիվ պայքարող բույսերը պետք ե ցանել պասսիվ պայքարողներից հետո և ընդհակառակը:

Ցանքաշրջանառությունն ակտիվ պայքար ե մղում վնասատուների և սնկալին հիվանդությունների դեմ, վորովհետև միենալու միջուկը տեղում մի վորեն բույսի յերկար մշակման հետևանքով բարգանում ու զարգանում են այդ բույսի վնասատուները, վորոնք բոլորովին մնա չեն հասցնում հաշորդ բույսին, այլ ընդհակառակը՝ փշտում են:

Մեծ ե ցանքաշրջանառության մեջ առվույտի դերը: Առվույտն ունի շատ յերկար արմատներ, վորոնք թափանցելով հողի խոր շերտերը, մնալով այնտեղ—փառաւ ու հարստացնում են հողն որդանական նյութերով:

Արմատների խիտ ցանցի միջոցով առվույտը փխրացնում ե հողը:

Ամենակարենը, վորի մասին կանգ առանք առաջ, հողը հարստացնեն և ուրիմ առվույտը հողը փխրացնում ե, հարստացնում և որդանական նյութերով և աղոտով, հետևապես իր այդ հատկություններով նա անպետք հողերը դարձնում ե պիտանի: Մեծ ե այդ հատկության դերը բամբակացան շրջաններում: Բամբակի անկախության խնդիրը մեզանից պահանջում ե ընդարձակել նրա տարածությունը: Հայտնի յի, վոր բամբակացան շրջան-

ներում կան հողի հսկայական պիտանի տարածություններ, վորոնք բոլորովին պիտանի չեն բամբակի համար: Անտ այստեղ ե, վոր առվույտի ցանքաշրջանառությունն ողնության ե գալիս և այդ անպետք հողերը դարձնում ե բամբակի համար միանգումայն պիտանի հողերը, վորոնք առվույտից հետո, բարձրացնում են բամբակի բերքատվությունը: Առվույտի գերը բամբակացան շրջաններում խոչը և նաև կերի տեսակետից: Այդ շրջանների անտանապահության կերի բաղան հանդիսանալու յի առվույտը:

Գիտենք, վոր այդ շրջաններում առվույտն ամենից շատ էֆեկտ ե տալիս, հետևապես, վորպեսզի միանգամայն ապահովենք այդ շրջանների սպառողական անասնապահության և տնտեսության մեջ մեծ դեր խաղացող կենդանի քաշող ուժի կերի խնդիրը, պետք ե ցանենք առվույտ ցանքաշրջանառության առմանած շրջանակներում, յենելով նրանից, վոր բամբակն այդ ըրաբեներում գերիշխող կուլտուրան:

Բամբակացան շրջանները հանդիսանալու յին նաև առվույտի սերմարուծարան, վորովհետև նա մեծ բերք ե տալիս միայն բամբակացան շրջաններում: Որինակ՝ հայտնի յի Սարդարաբաղի, Նոր-Արմավիրի կոլխոզների առվույտի սերմադաշերը, վորոնք ահազին քանակությամբ սերմ են արտադրում: Այս բոլորը հարկադրում ե մեզ բամբակացան շրջաններում ցանքաշրջանառության մեջ մտցնել առվույտը հետեւյալ նպատակով:

1. Ընդարձակել բամբակի տարածությունն ի հաշիվ անպետք հողերի:

2. Ապահովել այդ շրջաններում կենդանի քաշող ուժի և անտանապահության կերի բաղան:

3. Զարգացնել առվույտի սերմարուծությունը, վորի կարիքըն որ որի վրա առում ե:

Առվույտի ցանքաշրջանառության խնդիրը հացահատիկացին և անտանապահական տնտեսություններում ավելի հեշտ ե լուծել. այստեղ մեծ դեր ե խաղում կերի բաղան, անասունների քանակը, տեսակը և այլն:

## ԱՐՎՈՒՅՏԾԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Վորքան ել առվույտի համար կլիմայական, հողային և այլ պայմանները նպաստավոր լինեն, յեթե հողը լավ նախապատրաստված չե, բոլորովին այն յեկամուտը չենք ստանա, ինչ սպառում ենք:

Առվույտն այն բույսերից է, վոր մեծ պահանջ և ներկայացնում հողի հանդեպ՝ մշակման, մասնավորապես նախապատրաստման. սակայն և այն բույսերից մեկն է, վորը կրկնակի անզամ արդարացնում է իր վրա զրված բոլոր աշխատանքները: Վճռն և առվույտի հողի լավ նախապատրաստումը, ալդ՝ մոլախոտերից ազատեն է, հողն այն գրության հասցնել, վոր առանձինվի առվույտի միահավասար ծլելլ և ընդհանրապես ստեղծվին այն մաքսիմալ նպաստավոր պայմանները, վորոնք անհրաժեշտ են ավալ բույսի զարդացման համար:

Առաջին տարին առվույտը շատ թույլ բույս և և շատ զգացուն մոլախոտերի հանդեպ: Այդ իսկ պատճառով, առաջին և հիմնական պայմանն ե՝ զաշտը մոլախոտերից ազատել, մանավանդ կոճղարմատավոր մոլախոտերից, որինակ՝ չայիրը, զանդուրդանը և այլն:

Ցերկորդ նախապայմանը՝ ցանելու մոմենտին հողում բավականաչափ խոնավություն պիտի լինի, վորն անհրաժեշտ և առվույտի սկզբնական աճման համար: Քիչ խոնավություն լինելու դեպքում, մոլախոտերը, վորոնք այնքան ել պահանջկոտ չեն խոնավության և ընդհանրապես ավելի լավ են հարմարվել մեր պայմաններին, սկսում են արագ աճել ու նույնիսկ խեղդել առվույտին:

Մեծ նշանակություն ունի առվույտի համար նախորդ բույսը. առվույտը սովորաբար լավ և զգում իրեն շարքահերկերից հետո, որինակ՝ բամբակ, ճակնդեղ, կարտոֆիլ, սիլոսային բուսեր և այլն: Այդ բացատրվում է նրանով, վոր ընդհանրապես շարքահերկերից հետո, միջարքային մշակության շնորհիվ, հողը մտքուր և լինում մոլախոտերից:

Հողը պետք է վարվի աշնանը, իսկ յեթե նախորդող բռւյսը հացահատիկ է, այդ դեպքում հավաքելուց անմիջապես հնատ:

Վարը պետք է կատարել խորը՝ 20—25 սահմանմար, վորով հնարավորություն կստեղծվի վերականգնել հողի աերացիան: Մթնոլորտային տեղումներն այդ դեպքում ավելի արագ են ծըծվում, քան յերես վարի ժամանակ: Խոր վարը հնարավորություն և տալիս առվույտի առաջին տարվա թույլ արմատներին ավելի խոր գնալու:

Ռուսաստանի թեղենչուկի փորձադաշտի տվյալներն ապացնում են, վոր խոր՝ 25 սահման, վարի դեպքում, առվույտի բերքը ընդունում են ավելացման առաջին տարին գոմազրով պարաբացներուց հետո, զաշտում ցանվում են արմատավորուղներ, որինակ՝ կերի ճակնդեղ, կամ թե չե կարտոֆիլ:

## ՎԱՐԻ ԽՈՐՈՒԹՅՈՒՆԸ

10 սմ. 15 սմ. 20 սմ. 25 սմ.

Մեկ տարվա ստացած միջին բերքը (կիլոգրամով)	1616	1712	1776	1888
--	------	------	------	------

Աշնանը խոր վարելուց հետո, հողը թողնվում է այդ դրության մեջ մինչև գարուն: Գարնանը, առաջին իսկ հնարավորության դեպքում, յեթե ձմեռը հողը նստել է, անհրաժեշտ և կուլտիվատորով կամ 4 խոփանիով կրկնավարել, իսկ յեթե վոչ, բավականանալ զիգզագով փոցիսելով:

## ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Պատահում են դեղքեր, յերբ աշնանը հնարավոր չի լինում հողը վարել, այդ դեպքում պետք է հողը վարել գարնանը, սակայն դրանից ընդհանրապես պետք է խույս տակ վորովհետեւ յերեք այն բերքը չի ստացվում, ինչ ստացվում է աշնան վարի դեպքում:

Հողի յերեսը պետք է լինի հորթ ու հավասար, առանց կոշտերի, իսկ մյուս կողմից՝ պետք է լինի փեխուն, վորպեսզի առվույտի նուրբ արմատները կարողանան սկզբնական շրջանում խորը թափանցել հողի մեջ:

## ԴԱՇՏԸ ՊԱՐԱՐՏԱՑՆԵԼԸ

Վորպեսզի առվույտն իր գոյության ընթացքում ավելի շատ բերք տա, անհրաժեշտ է, վոր առաջին տարին հողը հարուստ լինի սննդարաբ նյութերով, իսկ այդ մենք կարող ենք կատարել զանազան պարարտանյութեր հողը մացնելով՝ որինակ, գոմազր հնագային պարարտանյութ և այլն: Տնտեսական տեսակետից ձեռնտու յե գոմազրը վորպես պարարտանյութ մացնել հողը վոչ թե առվույտը ցանելու տարում, այլ մեկ տարի առաջ, այդ դեպքում, մեկ անգամ պարարտանյութը մացնելով, յերկու բերք և վերցվում: Այդ հնարավոր և այժմ մեր պլանային տնտեսություններում կատարել ահա ինչպես. առաջին տարին գոմազրով պարաբացներուց հետո, զաշտում ցանվում են արմատավորուղներ, որինակ՝ կերի ճակնդեղ, կամ թե չե կարտոֆիլ:

Առաջին տարին արմատավորուղները կամ կարտոֆիլն ուղարկվում են հողը մացված գոմազրից և նոր յերկրորդ տարում՝ ցա-

նում ենք այդ հողում առվույտը։ Այսպես նպատակահարմար է ձեռնուու յե, վորովհետև առաջին տարում արմատապուուների միջաբացին մշակման շնորհիվ վոչչացնում ենք գոմաղբի հետ մոցված մոլախոտերը։

Բացի գոմաղբից, կարելի յե հողը պարարտացնել նաև հանքային պարարտանյութերով, որինակ՝ սուպերֆոսֆատով, վորից առվույտը մեծ բերք ե տալիս։ Վերցվում ե 2—3 ցենտներ սուպերֆոսֆատ և գարնանը շաղ ե արգում ցանքից առաջ։

Թուրքեստանում պարարտացման մի շարք փորձեր տվել են հետեւալ արդյունքները

Զպարար-	Պարարտացված	Պարարտաց-
տացված	սուպերֆոսֆա-	ված գոմաղբով
	տով	

<b>Բերքի քանակը 1</b>		
հեկտ. (3 քաղը	29,6 ցենտ.	101,3 ցենտ.
միաժին)		112,5 ցենտ.

### ՎՈՐՔԱՆ ՍԵՐՄ Ե ՀԱՐԿԱՎՈՐ ՄԵԿ ՀԵԿՏԱՐԻՆ

1 կիլոգրամը պարունակում ե 485,000 հատ առվույտի սերմ։ Ցեթեւ 1 կիլո ցանելու լինենք 1 հեկտարին, ապա լուրաքանչյուր քառակուսի մետրին ընկնում ե 50 հատ սերմ։ Լավ ցանված առվույտի դաշտում 1 քառակուսի մետրում հաշվում ե առաջին տարին 200 հատ բույս, իսկ վերջին տարիներում 100 հատ։ Այս հանգամանքը ցույց ե տալիս, վոր միշտ պետք ե խնայողաբար վարչիլ այդ թանկարժեք սերմի հետ։ Սովորաբար 1 հեկտարի սերմի քանակը կախված ե սերմի վորակից, նրա ծրունակությունից։ Սերմը պետք ե ունենա 85 տոկոսից վոչ պակաս ծլունակություն, այսինքն 100 սերմից 85-ը պիտանի լինեն ծլելու։ Դրա համար ել անձանոթ սերմ չպետք ե ցանել, սերմի նմուշը պետք ե ուղարկել սերմը քննող կայանն ստուգման, վորի քննության արդյունքից միայն հետո ցանել։

Սովորյատի նոր թարմ սերմը զեղին շագանակագույն ե, իսկ հին սերմը՝ մուգ շագանակագույն։

1 հեկտարի սերմի քանակը կախված ե նաև կլիմալական և հողային պայմաններից, վերջապես քանակը կախված ե նաև այն բանից, թե ինչ նպատակով ե ցանվում առվույտը՝ սերմ, թե խոտ

առանալու համար։ Սերմ ստանալու գեպքում քիչ պետք ե ցանել, վորպիսդի ցանքը նոսր լինի, խոտ ստանալու համար՝ շատ Սովորաբար մեկ հեկտարում պետք ե ցանել 10—15 կիլո։

### ՑԱՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Առվույտի ցանքի ժամանակը կախված ե կլիմայական և հողային պայմաններից։ Սերմերը ծլելու համար առվույտը պահանջում ե և խոնավություն և՝ ջերմություն, հետևապես շատ վաղ չպետք ե ցանել և վոչ ել շատ ուշ։ Անհրաժեշտ ե հողում լինի և խոնավություն և՝ ջերմություն։ Ավագային հողերը շուտ են տաքանում, շուտ ել կորցնում են խոնավությունը, նման հողերում շուտ պիտի ցանել, կազմվ հարուստ հողերը խոնավությունն ուշ են կորցնում, ուշ ել տաքանում են՝ անհրաժեշտ և նման հողերում ուշ ցանել։

Առվույտը կարելի յե ցանել և՝ աշնանը և՝ գարնանը։ Փորձերը ցույց են տալիս, վոր դարնան ցանքերը միշտ ել ավելի հաջող են լինում, քան աշնանը, մանավանդ յեթե ձմեռը շատ խիստ ե լինում։

Սակայն այնտեղ ուր հնարավոր ե՝ այսինքն ձմեռը խիստ չի լինում և ցանքի փշանալու վտանգ չկա, կարելի յե ցանել աշնանը, այդ գեպքում պետք ե աշխատել շուտ ցանել, վորպիսդի մինչև առաջին սառնամանիքները բույցը կարողանա ամրապնդվել։ Դարնան ցանքի դաշտավայրերում և նախալեռնային շրջաններում ցանքը կատարվում ե մարտի վերջին կամ ապրիլի սկզբին, իսկ լեռնային շրջաններում համեմատաբար ավելի ուշ։

### ԱՌՎՈՒՅՏԸ ՑԱՆԵԼ ՀԱՐՔԱՑԱՆՈՎ

Մեզ մոտ առվույտն անցյալում և համարյա այժմ ել ցանքել և ցանվում ե շաղացան, մինչդեռ մյուս յերկրներում, վազուց արդեն առվույտը ցանվում ե շարքացանով։ Շաղացանով և ցանքել մինչև հիմա, վորովիճետն մանր, փոշիացած անհատական տրնտեսություններում աշխատանքը մեմենայցնել հնարավոր չեր։ Այժմ պայմանները փոխված են, սովորովներն ու կոլխոզները և սրանց ոժանդակությամբ մենատնտեսները, պետք ե՝ վերջ տան շաղացանին։

Շարքացանով ցանելիս առվույտի ըերբը բարձրանում ե, վորպիսդի հնարավորություն և ստեղծվում գործադրելու այն բո-

լոր ազգութեանաբկումները, վորը պահանջում է առվույտի կուլտուրան: Վերեւում ասացինք, վոր առվույտը չափից դուրս լույս սիրող բույս ե. շարքացանը հնարավորություն և տալիս առվույտին ոգտագործելու արելի առատ լույսը: Բույսերն ավելի հավասար և միաժամանակ են զարգանում: Շարքացանը հնարավորություն և ստեղծում մոլախոտի գեմ մղվող պայքարը մեքենայացման յենթարկել, մշակելով միջարքային տարածությունները: Շարքացանի միջոցով, միջարքային տարածությունների փխրացումով, հնարավորություն և ստեղծվում ուցիոնալ կերպով ոգտագործելու հողում յեղած խօնավության պաշարը:

Վերջապես կան մի շարք մնկային հիմանդրություններ, վորոնցից առվույտը շատ և տուժում, մանավանդ խոնավ շրջաններում: Այդ մնկային հիմանդրությունների գեմ մասսաբ պայքարի միջոց և հանդիսանում շարքացան ցանքը, վորովհետև այդ գեղաքում բույսերը ավելի շատ ուժ և լույս են ստանում, իսկ այս հանգամանքն այնքան ել նախատավոր չե մնկային հիմանդրությունների զարգացման համար: Ահա ինչու շարքացան առվույտն ավելի բարձր բերք և տալիս քան շաղացանը:

Զնայած կան հատուկ կերպույսեր ցանող շարքացաններ, բայց մեղ մոտ ցանվում ե միայն ամենքին հայտնի հացահատիկների «Ունիվերսալ» շարքացանով:

Առվույտի բերքի վորակը կախված ե նրանից, թե ցանքի շարքն իրարից ինչ հեռավորության վրա յե գտնվում: սովորաբար ցանում են 10—50 սմ. հեռավորությամբ: Վորքան շարքերն իրարից հեռու յեն, ի հարկե 50 սմ. վոչավելի, այնքան մեկ հեկտարից ստացած բերքն ավելի յի լինում: Սակայն փորձերը ցույց են տալիս, վոր 10 սմ. հեռավորությամբ շարքերի առվույտի բերքն ավելի պիտանի յե, քան լայն շարքերից ստացած բերքը:

Ուկրայնայի կերի հնատիտուտի մեխանիկական անալիզը:

### ԽՈՑԻ ՔԱՐԵՐ ՏՈԿՈՍՈՎ

Ցանքի ձեր	Տերեր	Ցողունները	Մանր	Միջակ	Կոպիտ
Նեղ շարքերով 10 սմ.	58,9	64,4	30,3	3,9	
Լայն շարք. 50 սմ.	53,4	29,2	34,7	34,8	
Ավելի լայն 70 սմ.	57,2	19,4	37,6	40,6	

Այսպիսով տեսնում ենք, վոր լայն շարքերով ցանքից ստացած առվույտի խոռան ավելի կոպիտ ե, հետևապես խոտի վորակը ցած: Չենուտու չե նման խոտով կերակրել մատղաշներին՝ ձիերին ու խողերին:

Բացի այն, վոր ստացված խոտը կոպիտ ե լինում, այլև շուտ պառկելու հետեանքով կեղտուոված:

Լայն շարքերով առվույտի ցանքը ձմեռն ավելի շուտ ե յենթարկվում ցրտահարության, քան թե նեղ շարքերով ցանքը: Այս բոլորից պետք ե յեղրակացնել, վոր խոտի համար նպատակահարմար ե ցանքը կատարել շարքը շարքից 10 սմ. հեռավորությամբ:

### ՇԱՐՔԱՑԱՆԻ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄԸ

Առվույտը կարելի յի ցանել բոլոր այն շարքացաններով, վորոնցով ցանվում են հացահատիկները: Այդ շարքացանը նույն հաջողությամբ ցանում ե և առվույտի սերմերը, յերբ կանոնավորվում ե շարքացանը, այսինքն այնպես և արվում, վոր ցանկացած ու անհրաժեշտ քանակությամբ առվույտի սերմ թափվի:

Յենթարկենք պիտի ցանենք 1 հեկտարին 20 կիլո առվույտի սերմ: Շատերը հաճախ աչքի չափով են կանոնավորում մեքենան: Այդ միանդամայն սիրալ ե: Ինկատի պետք ե ունենալ առվույտի սերմի մանր լինելը, հակառակ դեպքում կարող ե պատահել, վոր ցանվի մի քանի անգամ ավելի խիտ, վորը ցանկալի չե:

### ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԿԱՆՈՆԱՎՈՐԵԼ ՇԱՐՔԱՑԱՆԸ

1. Պիտք ե իմանալ շարքացանի լայնությունը: 11 փողանի շարքացանի լայնությունը 143 սմ. ե.

2. Զափում ենք շարքացանի անիվի շրջագիծը, վորը սովորաբար հավասար ե լինում 4 մետրի:

3. Իմանալով շարքացանի լայնությունը և անիվի շրջագիծը, հեշտությամբ կարող ենք իմանալ, թե ինչպիսի տարածություն կցանի շարքացանն անիվը մեկ անգամ պտտվելիս:

143 սմ.  $\times$  4 մ. = 5,7 քառ. մետրի.

4. Դրանից հետո վորոշում ենք, թե մեկ հեկտար ցանելիս շարքացանի անիվը քանի անգամ ե պտտվում: Այդ վորոշելու

համար 1 հեկտարը (10,000 քառ. մետր) բաժանում ենք անիւ-  
վը մեկ անգամ պտտելու դեպքում ցանված տարածության վրա՝

$$10,000 : 5,7 = 1786 \text{ անգամ}.$$

այսինքն՝ շարքացանի անիվը 1786 անգամ պտտվելիս կթանգիք  
ամբողջ 1 հեկտարը:

5. Այժմ պետք է իմանալ, թե ցանկացած խտությամբ ցա-  
նելիս, այսինքն 20 կիլոգրամ, յուրաքանչյուր մեկ պտույ-  
տին վորքան սերմ կցանվի. դրա համար 20 կիլոգրամը պետք է  
բաժանենք 1786 պտույտի վրա,

$$20 \text{ կ.} : 1786 = 11 \text{ գրամ.}$$

6. Սակայն կանոնավորելու դեպքում նպատակահարմար և  
վերցնել վոչ թե մեկ անգամ պտույտի ժամանակ թափված սեր-  
մի քանակը, այլ 50 պտույտի, այսինքն՝  $50 \times 11$  գրամ = 550  
գրամ.

7. Ուրեմն շարքացանն այնպես պետք է կանոնավորել, վոր-  
50 պտույտի դեպքում ցանի 550 գրամ սերմ.

8. Այս հաշիվները կատարելուց հետո, ստուգում ենք շար-  
քացանի մասերը. հետո բարձրացնում ենք պտտվող մեխա-  
նիզմի կողմից անիվը և դում այնպիսի հենարանի վրա, վոր-  
պտտվելիս չշփվի հողի հետ.

9. Կանոնավորիչի միջոցով փոքրացնում ենք սերմ թափող-  
անցքերը. չափում ենք միլիմետրով այդ անցքի լայնությունն-  
ու զրում մի վորեն տեղ. Փոստ ենք շարքացանի տակ բրեկենտ  
կամ շոր, պտտվող անիվին կապում ենք թելի կամ շորի կտոր,  
հաշվելը հեշտացնելու համար:

10. Այդ բոլորից հետո, շարքացանի արկղն ենք լցնում առ-  
վույտի սերմերը, իջեցնում ենք լծակը և սկսում պտտել անիվը  
ճիշտ 50 անգամ. Պտտելու արագությունը պետք է համապա-  
տասխանի ցանելու արագությանը, շատ դանդաղ կամ արագ պըտ-  
տելիս, ճիշտ թիվ չենք կարող ստանալ:

50 անգամ պտտելուց հետո, բարձրացնում ենք լժակը, հա-  
վաքում բրեկենտի վրա թափված սերմն ու կցում, յեթե 550  
գրամից քիչ ե, անհամեշտ ե կանոնավորիչի միջոցով սերմ թա-  
փող անցքերը մեծացնել, իսկ յեթե 550 գրամից շատ ե, ընդհա-  
կառակ՝ պետք է փոքրացնել, ու նորից 50 անգամ պտտել, — մին-  
չև կտանանք 550 գրամ, այդ ժամանակ չափում ենք սերմ թա-  
փող անցքերը տվյալ լայնությունն ու գրում մի վորեն տեղ, վոր-

պեսզի չմոռանանք, ու յերբ ցանքն սկսվում է, կանոնավորիչի  
միջոցով սերմ թափող անցքերին տալիս ենք դրած մեծությունն  
ու սկսում ցանել: Այդ աշխատանքը կատարվում ենակ ցան-  
քըն սկսելը:

## ՑԱՆԵԼՈՒ ԶԵՎԸ

Սուածին տարին սովորաբար առվույտը քիչ է բերք տալիս,  
իսկ շատ տեղերում՝ բոլորովին չի տալիս: Վորպեսզի չպրկենք այդ  
տարվա բերքից—առվույտը ցանում ենք մի վորեն մշակու-  
թյան մեջ—կամ ինչպես ասում են ծածկոցով. ցանվում ենակ  
առանց ծածկոցի: Սովորողներն ու կոլխոզները պիտի իմանան ցան-  
քի այդ 2 ձևի առանձնահատկությունները, վորպեսզի տեղում  
ճիշտ լուծեն խնդիրը:

Միության մի շարք գիտահետազոտական հիմնարկներ գլո-  
նում են, վոր ծածկոցով առվույտ ցանելը ձեռնատու յե, ահա թե  
ինչու.

1. Ծածկոցով բույսը (սովորաբար մեզ մոտ աշնանացան կամ  
գարնանացան հացահատիկ) առածին տալիս է ավելի շատ  
բերք, քան առանց ծածկոցի.

2. Առանց ծածկոցի առվույտի ցանքը մոլախոտով վարակ-  
ված հողերում պահանջում է ահազին ծախս, մոլախոտերի դեմ  
պայքարելու համար, առանց վորի դրական հետեանք, այսին-  
քըն՝ լավ բերք չենք ստանա: Յեթե նման հողերում ցանքը կա-  
տարված է լինում՝ ծածկոցով—մոլախոտերի վտանգը փոքրանում  
է, վորովհետեւ ծածկող բույսը խեղդում, փչացնում է մոլախոտերին:

3. Յերբ առվույտը ծածկոցով ենք ցանում, առվույտի ծախ-  
սը պակասում է, վորովհետեւ համարյա բոլոր ծախսերն ընկնում  
են տվյալ ծածկող բույսի վրա:

4. Յեթե յերկու տարվա ստացած բերքը վեր ածենք կերի  
միավորների, կտեսնենք, վոր ծածկոցով ցանելու դեպքում՝ շատ  
ենք ստանում: Որինակ՝ նուսովակի փորձադաշտում  
մեկ հեկտարից՝ այն է առաջին տարվա վարսակից (ծածկող) և  
յերկորդ տարվա առվույտից ստացվել է 7935 կերի միավոր բերք,  
մինչեւ 1 հեկտար առանց ծածկոցի առվույտից միևնույն ժամա-  
նակամիջոցում, ստացվել է միայն 6856 կերի միավոր, այսինքն՝  
ծածկոցով ցանելու դեպքում, միայն առաջին յեկերորդ տարում  
նետառությունը առնում է յաւատանշյուր նեկտարին 1000 կերի մի-  
ավոր:

Ընդհանրապես ծածկոցով պետք և ցանել և դա ձեռնում յե  
հետևյալ տնտեսությունների համար.

1. Բոլոր հացահատիկային և աեխմիկական կուտուրաների  
թեքում ունեցող տնտեսություններում.

2. Այն անասնապահական տնտեսություններում, վրաբեղ  
ցանքաշրջանառության մեջ մտնում և և հացահատիկը.

3. Բոլոր տիպի տնտեսության ջրովի հողերում. վերջինս  
անհրաժեշտ և շեշտել, վորովհետև շատերը կարծում են, թե չկու-  
տուրա միևնույն տարին ցանելու դեպքում, հողում ջրի կրիզիս  
կդադրում են.

Սակայն յեթե ավյալ տնտեսությունում բարձր և ագրոտեխ-  
նիկան, մաքուր են դաշտերը մոլախոտերից, այդպիսի տնտեսու-  
թյուններում հնարավոր և ցանել և առանց ծածկոցի:

## ԻՆՉ ԽՈՐՈՒԹՅԱՄԲ ՊԻՏԻ ՑԱՆԵԼ

Առվույտի սերմը շատ մանր ե, իսկ ծիլերը նուրը, ուստի  
չի կարելի շատ խորը ցանել: Շատ դեպքերում գյուղացիները  
նույնիսկ փոցիով չեն ծածկում, այլ չչափարում են: Շար-  
քացանի դեպքում անհրաժեշտ և մեքենան յերես գցել, վրապեսզի  
սերմերը շատ խորը չենկնին: Նպատակահարմար և ցանել 1—2 սան-  
տիմետր խորույքամբ:

## Խ Ն Ա Մ Ք Ը

Շատ բերք ստանալու համար, անհրաժեշտ և ուշադիր խը-  
նամք ունենալ առվույտի ցանքին, այն և ժամանակին ջրել  
պայքարել մոլախոտերի ու լիսասառուների դեմ, պարարտացնել  
և այլն: Այդ բոլորը ժամանակին կատարելը յերբեք հնարավոր  
չի անհատական ցիր ու ցան տնտեսություններում: Բոլոր տե-  
սակի խնամքը ժամանակին կատարելու համար, անհրաժեշտ  
ունենալ միջոցներ ու պլանային աշխատանք, վորով ապահովված  
են միայն խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունները: Հետեւա-  
պես՝ ժամանակին ջրել ժամանակին պարարտացնել ժամանակին  
պայքարել մոլախոտերի և զանազան հիգանդությունների դեմ  
միայն հնարավոր և խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններում: Յեթե այդ բոլորը հնարավոր և կատարել նման տնտե-  
սություններում, եւրեմ բարձր բերքն ել հնարավոր և պետք  
և ձգտեն ստանալ խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունները:

## Ա. ԳԱՅՔԱՐ ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ԴԵՄ

Առվույտը ծլում և 7—10 որ հետո առաջին շրջանում բույսը  
դարձացնում և իր արմատային սիստեմը. անա մի շրջան, յերբ  
մոլախոտերը կարող են մեծ վնաս հասցնել նրան: Ի՞նչպես պիտի  
վոչնչացնել մոլախոտերը: Նախ շատ կարևոր ե մինչև ցանելն  
այնպես կաղմակերպված լինի հողի նախապատրաստումը, վոր  
մոլախոտեր չլինեն, մանավանդ ինչպես չայիրն ե, «ղանղուրդա-  
նը», դառնաչքը և այլն:

Շարքացանի դեպքում բավկահանին հեշտանում և աշխա-  
տանքը չնորհիվ մեքենաների: Մոլախոտերի դեմ պայքարը կա-  
տարվում և զանազան բազմաթափ կուլտիվատորների միջոցով:

## Բ. Զ Բ Խ Լ Բ

Զուրը հանդիսանում ե ինչպես գյուղացիներն են ասում,  
«առվույտի հողին»: Վորքան ժամանակին ջուր հասցրիր, այնքան  
առատ բերք կիրացնես Մեղ մոտ, դաշտավայրերում և նախալեռ-  
նային շրջաններում, առվույտը մշակվում և միայն ջրովի պայ-  
մաններում: Ջրելը լավ և ազդում յուրաքանչյուր քաղից հետո.  
լրացուցիչ ջուր պիտի տալ այն ժամանակ, յերբ նկատվում է  
պահանջ, իսկ այդ շատ հետո և վորոշել, — կարելի յե նկատել  
տերենների գույնից, թառամելուց և այլն: Զօրի կարիք ունեցող  
բույսերի տերենները չայցատանի պայմաններում, նամանավանդ  
դաշտավայրերում, «կապտում են»: ամառը ջուրը գործ և ածվում  
ավելի կարենը մշակույթի համար, — այն և բամբակի: Հնարավոր  
չի լինում ամառը ժամանակին ջուր հասցնել առվույտին, վորի  
հետեւնքով բերքն իջնում ե:

## Գ. Փ Ա Յ Խ Լ Բ

Առվույտի ցանքի հողը 2-րդ, 3-րդ և հետագա տարինե-  
րում նստելով կարծրանում ե, իսկ այդպիսի կարծր հողում բույսը  
վաստ և աճում: 2-րդ տարում վաղ դարսանն անհրաժեշտ և առ-  
վույտի դաշտը փոցինել «զիգ-զազ» յերկաթյա փոցինով՝ մի քա-  
նի ուղղությամբ: Փոցինելն անհրաժեշտ և նաև ամեն մի քաղից  
հետո և այդպես շարունակելով յուրաքանչյուր տարի: Փոցին-  
ելուց առվույտի բերքն ավելանում 15—20% -ով, իսկ վոր ամենա-  
կարենը ե, առվույտը հնարավորություն և ստանում միենույն  
տեղում յերկար մնալ:

Խնդիրն այն է, վոր հողը կարծրանալով, նախ հողում զըստ-նվոր խոնավությունն արագ ե գոլորշիանում, ապա պակասում ե հողի մեջ ողի քանակը, իսկ առանց համապատասխան քանակությամբ ողի և խոնավության, ընդհանրապես, բոլոր բույսերը վատ են աճում: Փոցխելուց փիրանում ե հողի վերին շերտը, դուր-շիացումը կատարվում քիչ և բացի այդ, հողն ավելի շատ ող և պարունակում:

Չպետք ե վախենալ փոցխելու հետեանքով արմատի վրա առաջացած վերքերից, այդ վոչ միայն մնաս չե, այլ ընդհակա-ռակը, նպաստում ե առվույտի ուժեղ թփակալման, վորովհետեւ արժատի վերք ստացած տեղերից դուրս են դալիս ու դարձանում նոր ցողուններ:

Առվույտի արմատը փոցխելուց չի տուժում, վորովհետեւ ար-ժատի հիմնական մասը շատ խորն ե:

Փոցխելուց վոչնչանում են բոլոր տեսակի մոլախոտերը. Ամերիկայում առվույտի հին, «Ճերացած» ցանքերը, վորոնք-սկսում են քիչ բնորդ տալ, փոցխելու միջոցով թարմացնում՝ ցիե-րիտասարդացնում են. այդ նպատակով անհրաժեշտ ե առվույտը 4—5-րդ տարում գարնանը դիսկավոր փոցխով լավ փոցխել փիրացնել դաշտը, վորից հետո նա դարձյալ սկսում ե բարձր բնորդ տալ:

## ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

Առաջին տարին առվույտի ցանքի պարարտացման մասին վերև հիշեցինք, յերբ խոսում եյինք հողի նախապատրաստման վերաբերյալ. Սակայն դրանով միայն բավարարվել չի կարելի Առվույտը 2-րդ, 3-րդ և հետագա տարիներում մեծ քանակությամբ հանքային նյութեր ե վերցնում հողից: Պարարտացնել կարելի յե գոմաղբով, մոխրով, հանքային պարարտանյութերով և այլն:

Գոմաղբով պարարտացնելիս անհրաժեշտ ե, վոր գոմաղբը լավ պատրաստված լինի, այսպես կոչված «այրված». հակառակ դեպքում մենք անգիտակցարար մոլախոտի սերմեր կմտցնենք ցանքի մեջ: Գոմաղբը չի կարելի աշնանից կույտ-կույտ պահել առվույտի ցանքում, վորովհետեւ ձյունի և անձրեկի ջրերից սնընդարար մասերը լուծվում, հեռանում են: Գոմաղբը պետք ե պահել վորեն ծածկությունում և առվույտի տակ և շաղ տալ վաղ գարնանը:

Մեր մի շարք ցըաններում հսկայական քանակությամբ մոխիր ե հավաքվում, անհրաժեշտ ե այդ ոգտագործել վորպես պարարտանյութ: Մոխրով պարարտացված առվույտի ցանքը բարձրացնում ե բերքը 25-30%<sup>0</sup>-ով: Մոխիրը չի կարելի աշնանից շաղ տալ կամ դաշտ տաներ Հարկավոր ե ձմեռը կուտակել մի չոր տեղ, ծածկոցի տակ, վորովհետեւ անձրեկի և ձյան տակ ջրերից լուծվում են մոխրի սննդարար մասերը և հեռանում: Մոխիրը դաշտ պիտի տանել զարնանը և առվույտի ցանքի վրա հավասար կերպով շաղ տալ:

## ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՑՈՒԹԵՐ

Առվույտի անհրաժեշտ հիմնական անորդանական նյութերն են՝ աղոտը, ֆոսֆորը և կալին:

Դիմենք, վոր առվույտն աղոտը՝ վերցնում ե առանց մեր ոգնության՝ ողից: Փորձերը ցույց են տալիս, վոր մեր հողերը կալիով հարուստ են, այսպիսով մեր առաջ խնդիր ե դրվում, առվույտին ոգնություն հասցնել հանքային պարարտանյութերից միայն ֆոսֆորով: Ֆոսֆորային պարարտանյութերից առվույտի նկատմամբ սովորաբար գործ են ածում սուպհերֆոսֆատը:

1928 թվին Տաշկենտի փորձակայանի սուպհերֆոսֆատով պարարտացման փորձի արդյունքը հետևյալն ե.—

Առանդ պարարտ. 1 հեկտ. 4675 կ. գ.

Սուպհերֆոսֆատով 1 » 5345 կ. գ.

Ճիշտ ե, առվույտի դաշտը պարարտացնելը պետք ե կատարել նախ քան ցանելը, բայց կարելի յե պարարտացնել նաև հին ցանքերը:

Այդ կատարվում ե միայն վաղ գարնանը, հակառակ դեպքում, ուշացնելիս՝ կարող են այրվել առվույտի կանաչած ցույնները:

Վորպեսպի պարարտանյութերը քամուց չփչանան, վաղորոք խառնում ենք խոնավ հողի հետ:

Պարարտանյութը շաղ տալուց հետո, պետք ե փոցխել հա-սարակ կամ սկավառակավոր փոցխով: Պարարտացումն ավելի ոգնակար ե, յերբ անձրեկից առաջ ենք, կատարում: Սուպհերֆոս-ֆատով կարելի յե պարարտացնել յուրաքանչյուր քաղից հետո, սակայն նպատակահարմար չե, վորովհետեւ չի արգարացնում իրեն:

Աւզբեկաստանի փորձակայանի պարարտացման փորձը տվել է բերքի հետևյալ ավելացումները  $^0|_0$  ներով:

Զպարարտ.	Պարարտ.	Պարարտ.	Պարարտ.
գարնանը	1-ին ք.	հետո	2-րդ ք. հետո
1925 թ.	0	57,9	18,7
1926 թ.	0	24,8	12,5
			3,0

Աղյուսակից պարզ յերեսում են, վոր 1-ին և 2-րդ քաղցից հետո պարարտացմանը ավելացնում են բերքը չնչին տոկոսով, իսկ գարնան պարարտացումից ավելանում են բերքը  $57^0|_0$ -ով:

Նախկինում կարծում եին, թե պարարտանյութերն աղջում են միայն շաղ տված տարին, բայց փորձերը ցույց են տալիս, վոր պարարտանյութերն աղջում են նաև 2-րդ, 3-րդ և հետագա տարիներին:

Աւզբեկաստանի փորձակայանի պարարտացման փորձը տվել է հետևյալ արդյունքը (կիբողբամներով):

Շաղ տված տարին Առանց պարարտաց. Պարարտաց. սուպերֆու.

1925 թ.	2416 կ-դրամ	3918 կ-դրամ
1926 թ.	4480 »	8592 »
1927 թ.	688 »	1880 »

Այսաղից պարզ կարելի յեն նկատել, վոր պարարտանյութերը վոչ միայն շաղ տված թվին, այսինքն 1925 թ. բերքն ավելացրին, այլ ավելացրին բերքը 2-րդ տարին՝ 1926 թվին և 3-րդ տարին՝ 1927 թվին:

## ԱՐՎՈՒՅՏԻ ՎՆԱՍԱՏՈՒԵՐԸ

Մեզ մոտ առվույտի ամենատարածված և ամենավտանգավոր վնասատուները՝ թրթուռը և «գայլուկն» են կամ ինչպես զյուղացիներն են առում «գաղճը» (կուսկուտա): Թրթուռից շատ ետքութեամբ առվույտի առաջնին բերքը: Յեթե հաշվելու լինենք, ամբողջ Հայաստանում բերքի  $30^0|_0$ -ը վոչնչանում են թրթուռից, իսկ դա հսկայական արժեք ե կազմում:

Այդ թրթուռները զարգանում են միջատների դեռ նախորդ տարվանից դրված ձվիկներից, վորոնք ձմեռը ցրտահար չեն լինում: Գարնանն այդ ձվիկներից դուրս են դալիս վերոհիշալ թրթուռները և սկսում արագ կերպով սնվել առվույտի մատղաշ տերեներով, թողնելով տերեկի ջղերը:

Հեռվից թրթուռով վարակված առվույտի ցանքը նկատելի յեն, նա կորցնում ե իր կանաչ գույնը, գորշանում ե, բույսերը

չեն զարգանում, կանգ են առնում: Այդ թրթուռների դեմ պայքարելու համար կան մի ջարք միջոցներ. նախ՝ վարակվելու դեպքում անհրաժեշտ են ննձել ու այրել, կամ առանց քաղելու թողնել անասուններին արածելու. քաղելուց կամ արածեցնելուց հետո անմիջապես ջրում ենք ցանքը:

Սակայն ննձել կամ արածեցնել, սրանք պայքարի պասսիվ ձևեր են և չեն համապատասխանում սովորողների և կոլխոզների պահանջներին: Թրթուռների դեմ ակտիվ պայքարելու քիմիական միջոցն ե, որինակ՝ կրաջուրը. թրթուռը նկատելուն պես, առանց ժամանակ կորցնելու, անհրաժեշտ ե կրաջուրը պարարտել և մի քանի անգամ սրսկել: Վորքան ուշացնենք սրսկումը, այնքան գժվար և վոչնչացնել թրթուռներին: Ավելի լավ ե ոգնում ջիպսինը և սրա նման մի շարք նյութեր. այս հարցով զբաղվում են ներկայում մեր հետազոտական կայանները, Պակաս վնաս չի տալիս «գայլուկը» կամ «գաղճը». այս գեղագում անհրաժեշտ ե, վոր ցանելիս սերմի մեջ զայտեկի սերմ չինի, վորի համար ել սերմը պետք ե անպայման ստուգի սերմ սուզող կայաններում: Առվույտի սերմի մեջ գայլուկի սերմ շատ լինելու դեպքում, արգելվում ե ցանել: Վորն ե «գայլուկը» կամ «գաղճը». — սա պարագիտ բռյու ե, այսինքն ապրում ե տուլույտի հաշվին: Ունի շատ մանր սերմեր, վորոնց առվույտի սերմերից անջատել մի քիչ գժվար ե: Վերջերս միայն ելեկտրական ժապավենի միջոցով են անջատում այդ սերմն առվույտից: Գայլուկի սերմը խորդ ու բորդ ե, իսկ առվույտինը՝ վոչ, Յերբ նկատվում ե, վոր առվույտի սերմի մեջ գայլուկի սերմ շատ կա, խառնում են յերկաթի մանր փոշի: Հնորհիվ գայլուկի սերմի խորդուրորդության, յերկաթի փոշին մըտնութեամբ այդ փոսիկների մեջ և յերբ անց ենք կացնում մագնիտայա ժապավենով, գայլուկի սերմերը մնում են ժապավենի վրա և ստանում ենք մաքուր առվույտի սերմ:

Դաշտում ցանելուց հետո ծլում ե նաև գայլուկը: Առվույտին կառչելուց հետո կտրվում ե իր արմատից ու ծծիչների միջոցով ծծում ե սրա ցողունների մնունդը:

Գայլուկի ցողուններն սպիտակ թելիկներ են, վորոնք փաթթվելով առվույտի ցողուններին, շատ կարճ ժամանակամիջոցում տարածվում են ամբողջ ցանքում: Քիչ լինելու դեպքում, անհրաժեշտ ե անմիջապես վարակված թփերը հավաքել ու այրել: Իսկ յեթե ամբողջ ցանքն ե վարակված, հարկավոր ե նախ գայլուկի ծաղկելը հնձել առվույտը: Իսկ ամենակարևորն այն ե, վոր սերմն ստուգված լինի սերմ ստուգող կայանների կողմից:

## ԱՐՎՈՒՅՏԻ ՀՆՁԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Եատ կարեոը և առվույտը հնձել ժամանակին: Ժամանակին հնձելն ազդում և ստացված խոտի վորակի վրա և հաջորդ քաղի քանակի վրա:

Ստացված առվույտի չոր խոտի բիմիական կազմը.

Հնձել ժամանակը	Զուր	Մոլիլը	Թաղանթի բար-նութ	Ճաշու	Ազոտալին նյութին	Սպիրուլինա-լին նյութեր	Միագոյն հքսորդականալին նյութեր
Հատուկենատ ծաղիկ	9,06	10,37	26,62	2,21	18,92	15,54	32,79
Լրիվ ծաղկած	8,62	9,70	32,09	1,59	17,18	13,97	30,79
Ծաղկելուց հետո	10,54	8,75	32,57	1,62	14,38	10,96	32,14

Այս թվերն ապացում են, վոր ամենանպատակահարմար ժամկետն այն է, յերբ հատուկենատ ծաղիկներ են յերեւում. այդ ժամանակ հնձած խոտն ավելի շատ աննղարար նյութեր և պարունակում, քան ուշ հնձածը ճիշտ է, լրիվ ծաղկման շրջանում ավելի շատ խոտ և ստացվում, սակայն ցածր վորակով:

Առվույտի չոր խոտի բաղադրիչ մասերի բիմիական կազմը

	Ցողուններ	Տերեններ	Ծաղիկներ
Սպիրուլին	10,8	22,2	32,2
Ջարագ	0,5	2,6	1,5
Թաղանթանյութ	52,0	15,5	16,5
Մոխր	6,2	16,3	9,6

Այս թվերը ցույց են տալիս, վոր խոտի ամենասաննղարար յասը — այն է սպիրակուցային նյութերը, վորոնք մեծ նշանակություն ունեն անսառուների համար, կուտակված են տերմիներում և ծաղիկներում, ահա ինչու յե անհրաժեշտ հռւնձը չուշացնել և այնպես վարվել, վոր խոտի թանկարժեք մասը՝ տերեններն ու ծաղիկները չուցացնելիս, դաշտում չմնան:

## ՄԵՐՄ ՍՏԱՆԱԼԸ

Մերմի խնդիրը շատ կարեոր եւ լավ բերք և տալիս այն աերմը, վորն ստացվում և մեզ մոտ տեղական տեսակներից, վորովհետև հարմարված և լինում կլիմայական ու հողային սպեցիֆիկ պայմաններին: Հայաստանում, բացի հատ ու կենտ փորձերից, դեռ մասսայականորեն չենք անցել տեղական առվույտի սերմի պատրաստմանը: Գետք և կատարենք Հ. Կ. (բ) Կ 8-րդ համագումարի վորոշումը — կազմակերպենք 60 սերմարուծական կոլխոզներ:

Մենք ունենք այն բոլոր նպաստավոր պայմանները, վորոնք պահանջվում են հատկապես առվույտի սերմ ստանալու համար: Մենք պետք ե ողտագործենք տեղական առվույտը:

Հայտնի յեն Ախտայի, Դարաւագյաղի, Զանդեղուրի, Նախի-ջեվանի առվույտներն իրենց լավ հատկություններով. սրանք դարեր շարունակ մշակվել են այդ վայրերում, դարերի գոյության պայցարում ձեռք են բերել սքանչելի հատկություններ: Անտեսելով այդ, մենք դեռ դիմում ենք ուրիշ յերկրներ, շատ անգամ շատ հեռու — սերմ ստանալու համար: Արդյունքը լինում ե այն, վոր կամ չենք ստանում, կամ վատն ենք ստանում, կամ ուշ ենք ըստանում: Միշտ ել յեղել են զեպքեր, յերբ սերմի բացակայության պատճառով չենք կարողացել կատարել մեր պլանները: Առվույտի լավորակ սերմ ստանալու համար, հաշվի պիտի առնել ցանքի մի շարք առանձնահատկությունները, վորոնց անտեսելին անշուշտ կազ-դի ստացված սերմի թե վորակի և թե քանակի վրա: Զի կարելի պատահական սերմերն սպասարկել սերմացու ցանքի համար. անհրաժեշտ և վերցնել այնպիսի սերմ, վորն աչքի բնկնի իր բարձր վորակով և բերքատվությամբ, յերաշտի, ցրտի, հիվանդությունների դիմացկունությամբ, վորը հարմարված լինի մեր պայմաններին և այլն: Հայաստանում, վորպես սերմարուծական շրջաններ, հատկապես առվույտի սերմ արտադրող շրջաններ են՝ վաղպատը, Ղուրդուղուլին, Ղամարլուն, Դարաւագյաղը, Գորիսը, Կոտայքը, Աշտարակը և այլն: Հողը, վորտեղ պիտի ցանքի առվույտը սերմի համար, առաջին հերթին պիտի և բոլորովին աղատ լինի մոլախոտերից, վորեց շատ և տուժում առվույտի ցանքը. դրա համար անհրաժեշտ և աշխան հերկը, գարնան կրկնակերկը և փոցիրը:

Ռուսաստանի մի շարք փորձակայանների փորձերը ցույց են տվել, վոր լայն շարքերով ցանքած առվույտի ցանքից ավելի

շատ սերմ և զերգվում, քան նեղ շաբքերով ցանվածից: Որինակ՝ Բալաշովի փորձակայանի մի քանի տարվա ավանդները հետևյալն են տառեմ:

Սովորական նեղ շաբքերով ցանքի 1 հեկտարից ստացվել ե

» 168 կղ. սերմ

լայն շաբքերով » » 248 » »

Պոլտավյայի փորձակայանի տվյալները դարձյալ նույն են տառեմ:

Սերմի բերքը միջարքային տարբեր տարածությունների դեպքում հաշված ցենտներով.

Նեղ շաբքերով ցանքի 1 հեկտ. . . . . 1,53 ցենտ.

Միջարքային տարածությունը 36 սմ. . . 3,03 »

» » 56 » . . 3,47 »

» » - 72 » . . 2,29 »

Փորձերը միանգամայն ապացուցում են, վոր սերմի համար առվույտի ցանքը պետք է կատարվի լայն շաբքերով—40—50 սմ. լայնությամբ:

Լայն շաբքերի դեպքում հնարավոր ե մեքենայացման յենթարկել խնամելու և մշակման աշխատանքները, ինչպես և մոլախոտերի դեմ պայքարը, փողխելը փխրացնելը և այլն:

Սերմի համար կատարվող ցանքերը վոչ միայն լայն շաբքերով պետք ե լինեն, այլ և նոոր ցանվեն. պետք ե բավարարվել 1 հեկտարում 7—10 կիլո սերմերով. ուրիշ յերկրներում 1 հեկտարում ցանում են նույնիսկ 5 կիլո սերմ:

Սերմի համար նպատակահարմար ե ցանքը կատարել առանց ծածկոցի. վոչ մի զերգում սերմի արտադրության նկատմամբ ծածկոցը ձեռնուու չի, լինի դա զարի կամ ուրիշ հացահատիկ, վորովհետեւ ծածկոցի զերգում սերմի քանակն ընկնում ե:

Խնամքի տեսակետից՝ այն բոլոր ձեռնարկումները, ինչ պահանջում ե ընդհանրապես առվույտի ցանքը, նույնը պահանջում ե նաև առվույտի սերմաղաշու—պարարտացնել. ջրեւմոլախոտերի և ֆլաստուների դեմ պայքարել և այլն:

Հիվանդություններից այստեղ զայլուկի հասցրած վասու կրկնապատկվում, յեռապատկվում ե. անհրաժեշտ ե գայլուկով վարակված դաշտը վոչ միայն չոգտագործել սերմի համար, այլ և նույնիսկ խոտ ստանալու համար ել չպահելու Քիչ վարակ-

ված լինելու դեպքում պետք ե քաղել ու այրել, իսկ յեթե շատ և վարտեկված, վարել առվույտի ցանքը և աեղն ուրիշ կուլտուրա ցաներ:

## ՎՈՐ ՀՆՁԻՑ ՊԵՏՔ Ե ՍԵՐՄ ՎԵՐՅԱԵԼ

Մեզ մոտ սերմաբուծական տնտեսությունների աշխարհագրական, կլիմայական պայմանները թույլ են տալիս 2—4 անգամ առվույտի ցանքից խոտ հնձել. այդ տեսակետից բոլորովին նպատակահարմար չե առվույտի տառջին բերքը սլահել սերմի համար, վորովհետեւ սա սովորաբար վարակված ե լինում զանգամ մոլախոտերով: Նպատակահարմար ե սերմը վերցնել 2-րդ հնձից. այս կարելի յե կիրառել դաշտավայրերում, ինչպիսին ե՝ Վաղպատը, Ղուրդուղուլին, Ղամարլուն և ուրիշները,—իսկ լեռնային շրջաններում, ինչպիսիք են, որինակ՝ Ապարանը, այնտեղ բոլորովին նպատակահարմար չե 2-րդ քաղը թողնել սերմի համար, վորովհետեւ այնտեղ հնձվում 2 անգամ և յերկրորդ բերքից սերմ ավելի քիչ ե ստացվում, քան առաջնից:

## ԱՌՎՈՒՅՏԻ ՍԵՐՄԸ ՀԱՎԱՔԵԼԸ

Առվույտի սերմը սովորաբար հավաքում են ցանքի 3-րդ և 4-րդ տարում, իսկ յերբ ցանքը կատարված ե հատկապես սերմի համար, կարելի յե սերմը հավաքել նաև 2-րդ տարում: Հունձը սերմի համար պետք ե կատարել այն ժամանակ, յերբ պատիչների մեծ մասը մուգ գույն ե ստանում: Առվույտը պետք ե հավաքել առավոտյան ցողի ժամանակ, հնձող մեքենայով, իսկ այդպիսիները չիներաւ զերգում, գերանդիպով կամ մանգաղով և խուրձ կապելիս հնուցնել բոլոր ավելորդ մոլախոտերը: Գայլուկով վարակված ցանքերից, ինչպես քիչ վերև նշեցինք, սերմ բոլորովին չպետք ե հավաքելը

Խուրձերը չըրանալուց հնտո տեղափոխել կալսերու վայրը հետագա վերամշակման համար:

## ԱՌՎՈՒՅՏԻ ԿԱԼՍԵԼՆ ՈՒ ԶՏԵԼԸ

Առաջին հերթին սովորական կարսող մեքենայով, իսկ յեթե չկա, կամերով են կալսում առվույտը, ցողունները հեռացնելու նպատակով: Այնուհետեւ կրկին անգամ թեղն անց ե կաց-

վում կալսիչ, միջոցով: Յերբ սերմն ամբողջովին չի բաժանվում  
անհրաժեշտ և և 3-րդ անգամ անց կացներ:

Արհեստական կերպով յերբեք չորացնել թեղը, վորովհետեւ  
այդ գեպքում սերմի ծլունակությունը կորչի. յերկու կամ  
յերեք անգամ սերմը պետք ե անցկացնել քամհար մեքենայով:  
Քամհար մեքենայով մաքրելուց հետո, սերմները վերջնա-  
կանապես պետք ե զտել գայլուկից հատուկ մեքենաների միջո-  
ցով. սերմը վերջնականապես մաքրելուց և չորացնելուց  
հետո, պետք ե լցնել նոր, մաքուր, նախորոք ախտահանված  
պարկերի մնջ, և պահել չոր ու մաքուր պահեստներում:

## Կ Ո Ր Ն Գ Ա Ն

Կորնգանը թիթեռնածաղիկներին պատկանող բազմամյա  
քույս ե. արմատների վրա պալարիկների մեջ գտնվող բակտե-  
րիաներն ողի աղուրը վերցնում են իրեն սնունդ և սնում  
նաև բռնյերին:

Կորնգանը յերաշտին դիմացող բույս ե: Յերաշտ տարի-  
ներին տալիս և ավելի շատ բերք, քան առվույտը ևյերեքնուկը:  
Ցողունները մոտ 1 մետր բարձրության են հասնում. Կորնգանը  
դեպի հողերը շատ քիչ պահանջկոտ ե, աճում ե ամենաքար-  
քարոտ, անգամ կրային հողերում, ուր շատ քիչ կուլտուրաներ  
են աճում: Ունի ուժեղ զարգացած արմատներ՝ 1—2 մետր  
խորությամբ: Կորնգանի արմատները մյուս կուլտուրական  
բույսերի համար անմատչելի հանքային նյութերը հեշտությամբ  
յուրացնում են և ոդագործում:

Կորնգանի արմատները շատ խորն են գնում, վարի շնորհիվ  
ողովում են հողի խոր շերտերից, վորտեղից ուրիշ մշակութներ  
չեն ոգավում: Կրասեր բույս ե: Այն հողերը, վորոնք շատ  
աղքատ են կրից, կորնգանի համար այնքան ել նպաստա-  
վոր չեն: Կորնգանը կանաչ դրորյամբ տնասութեներին փորու-  
ուցի չի պահառառմ, ինչպես տովույն ու յերեխուկը:

Ժամանակին հավաքված կորնգանը դառնում է անասուն-  
ների համար լավ սննդարար կեր: Պարունակում ե մեծ քանա-  
կությամբ սպիտակուցներ և կիր: Կիրն անհրաժեշտ ե յերիտա-  
սարդ, աճող անասունների վոսկրներն ամրացնելու համար:  
Կորնգանը մեղրատու բույս ե, ծաղոկման սկզբից մինչև հնձելը  
տևում է 8-ից 10 որ: Այդ ժամանակամիջոցում մեղուները մեծ  
քանակությամբ մեղքահյութ են ժողովում կորնգանի ծաղիկներից:  
Ահա ինչու համար մեր նախալեռնային և լեռնալին շրջաններում,  
ուր զարգանում ե անասնապահությունը, ուր մեծ քանակու-  
թյամբ կորնգանի ցանքեր կան, նպատակահարմար և նաև զրադ-  
վել մեղքաբուծությամբ: Աղքատ ու վատ հողերում, վորտեղ

միւս բույսերը լավ չեն զարգանում, կորնդանը ձեռնտու յեմինույն տեղում պահել բավականին յերկար ժամանակ, նույնիւնչել 20 տարի, ինչպես անում են Աղբքաջանում: Այդեղքում ամեն տարի թափված սերմերից նոր բույսեր են զարգանում:

Լավ հողերում ձեռնտու չե 4—5 տարուց ավել ուստագործել կորնդանը:

Հայաստանում վաղուց ե, վոր մշակում են կորնդան, բայց միայն մի քանի շրջաններում, ինչպիսին են՝ Սիսիանը, Դարաւագյաղը, Ախտան, Լենինականը և այլն: Ճիշտ ե, առաջին տարին մեծ բերք չի տալիս, սակայն 2-րդ, 3-րդ և հետագա տարիներին սովորաբար հնձվում ե 2 անգամ: Կորնդանը լինում ե տարբեր տեսակի. կան տեսակներ, վորոնք առաջին տարին չեն ծաղկում և բերք չեն տալիս, կան կորնդաններ ել, վորոնք առաջին տարին տալիս են միայն մեկ քաղ. սակայն Հայաստանում կան կորնդանի տեսակներ, վորոնք առաջին տարին հնձվում են 2 անգամ: Այդ համեմատությունը չափից դուրս ձեռըն-տու յե մեր անասնապահության համար՝ ամուր կերի բաղասեղելու տեսակետից:

## ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ճիշտ ե, վերը թվեցինք այն բոլոր հատկությունները, վորունի կորնդանը, սակայն դրանից չպետք ե յեղբակացնել, թե կորնդանը կարելի յե ցանել առանց հողի լուրջ մշակման: Այդ չափից դուրս սիալ կինի: Անհրաժեշտ ե աշնանից հողը պատրաստել ահա ինչպես, վարել շատ խորը, վորպեսդի նախ հողը փխրուն լինի, յերկրորդ՝ կուտակվի մեծ քանակությամբ խոնավություն (ձմեռվա ձյունից և անձրևներից): Հողի փխրուն լինելն անհրաժեշտ ե, վորպեսդի կորնդանի արագ աճող արմատները խորը դնան: Գարնանը նպատակահարմար ե փոցինել և ապա միայն ցանել: Չոր շրջաններում գարնան կրկնավարից պետք ե խույս տալ:

Այն, ինչ վոր մենք սերմ ենք անվանում, իրենից միասերմանի պատիճ և ներկայացնում: Սերմի քանակը կախված է սերմի վորակից—նրա ծրանակությունից, ցանելու նպատակից խոտ ստանալու, թե սերմի համար, հողային և կլիմայական պայմաններից և վերջապես ցանելու ձերց:

Սերմը պետք ե ունենալ վոչ պակաս 70% ծլունակություն: Առա ստանալու համար պիտի ցանել ավելի խիտ, քան սերմ ստանալու համար: Չոր շրջաններում պետք ե խույս տալ խիտ ցանելուց, անհրաժեշտ և նոսր ցանել: Մոլախոտերով ծածկված հողերում խիտ պիտի ցանել: Շարքացանով ցանելիս, պետք ե վերցնել 100—125 կիլո, շաղացանի դեղքում ավելի շատ՝ 120—140 կիլո:

## ՑԱՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Կորնդանը ցանվում ե մեծ մասամբ գարնանը. սառնամանիքներից շատ չի վախենում: Կարելի ին ցանել գարնանը բավական վաղ, սերմները ծլելու համար պահանջում են շատ խոնավություն, վորի պատճառով ցանկալի յե ցանելուց առաջ 1—2 որ սերմները թրջել, վորպեսդի խոնավություն կլանեն, ապա նոր ցանել: Այդպես են վարդում, յերբ հողում բավականչափ խոնավություն չկա: Վորքան շուտ ե ցանվում, այնքան միահավասար և լավ և կանաչում:

## ՑԱՆԵԼՈՒ ԶԵՎԸ

Կորնդանի ցանքի ձևը կախված ե տվյալ շրջանի հողացիւմայական պայմաններից:

Յեթե տվյալ շրջանի մթնոլորտային տեղումները շատ են, կորնդանը պետք ե ցանել ծածկոցով, իսկ չոր շրջանում անպայման առանց ծածկոցի, վորովնետե ծածկող բույսը՝ տվյալ գեպքում վորեն հացանատիկային բույսը, ոգտվում ե խոնավությունից, ինչպես կորնդանը: Սերմարուծական նպատակների համար անպայման պետք ե ցանել առանց ծածկոցի:

Կորնդանը ցանում են միմիայն շարքացանով, այն ել շարքը շարքից 10 սմ. հեռավորությամբ:

## ԻՆՉ ԽՈՐՈՒԹՅԱՄԲ ՑԱՆԵԼ

Կորնդանի սերմները պատիճներով ին ցանում: Շատերը խարվելով պատիճների մեծությունից, կարծում են, վոր կարելի ին խոր ցանել: Մինչդեռ իսկական սերմների մեծությունը հաղիվ թե տարբերվի սերմի մեծությունից: Հետևապես, խոր ցանելու դեղքում ծիլերը նուրբ լինելով, կարող են չկանաչել, գրա համար կորնդանը պետք ե ցանել 2—3 սանտիմետր խորությամբ:

ԻՆԱՍՔԸ

Առաջին տարին կորնդանն առանձին խնամք չի պահանջում  
և ընդհանրապես հետագա տարիներում ել նա պահանջկոտ չե:  
Աչքի ընկնող խնամքն այն ե, վոր յերկրորդ տարին՝ վաղ՝  
դարնան անհրաժեշտ ե կորնդանի գաշտը փոցին «զիգ-զազ»  
կամ այլ փոցխով: Զպեաք և կասկածել, վոր փոցինը կարող ե  
մաս հասցնել ցանքին, ընդհակառակը, ուրիշ յերկրների փորձը  
ցույց ե տալիս, վոր փոցինը վոչ միայն չի մնասում, այլ, ընդ-  
հակառակ՝ նպաստում ե բույսի հետագա ուժեղ աճմանը:  
Գարնան փոցինց զատ, անհրաժեշտ ե փոցին նաև յուրաքան-  
չուր քաղից հետո: Փոցինը բարձրացնում և կորնդանի-  
քերը:

## ՀՆՁԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Քաղը պետք է կատարել ժամանակին. ուշացնելու դեպքում  
ստացվում է կոպիտ կեր, պակասում են սննդարար մասերը;  
Քաղի ուշացումն աղդում է նաև հաջորդ բերքի քանակի վրա:  
Վարքան առաջին քաղը ժամանակին է կատարվում, այնքան  
շրջ քաղը լավ է լինում: Հյուսիսային յերկրներում տալիս ե  
25—30 ցենտ. խոտ. մեզ մոտ, լավ մշակելու դեպքում, մեկ հեկ-  
տար կորնդանը առաջին արթում տալիս է 30—50 ցենտներ  
չոր խոտ:

Կորնգանի ժիմիական կազմը կտիված բաղի ժամանակից—Բեզին-  
չուկի փորձակայտնի տվյալներով.

$\Omega_{\text{об} \cdot \text{р}}$	$U_{\text{об} \cdot \text{р}}$	$\theta_{\text{об} \cdot \text{р}} \text{ и } \theta_{\text{об} \cdot \text{р}}$	$\Delta_{\text{об} \cdot \text{р}}$	$\bar{U}_{\text{об} \cdot \text{р}} / \bar{\theta}_{\text{об} \cdot \text{р}}$	$\bar{U}_{\text{об} \cdot \text{р}} / \bar{\theta}_{\text{об} \cdot \text{р}}$	$\bar{U}_{\text{об} \cdot \text{р}} / \bar{\theta}_{\text{об} \cdot \text{р}}$
7,65 ± 6,27	7,00	21,77	3,48	16,40	15,06	45,08
8,04 ± 7,68	7,68	17,97	2,87	19,44	17,53	45,00
6,22 ± 6,75	6,75	25,41	4,05	14,82	18,71	42,75

Այս թվերը պարզ ցույց են տալիս, վոր քաղը պետք է կատարել այն ժամանակ, յերբ բոլորից շատ սննդաբար նույթեր, սպիտակուցներ են կուտակվում բույսերի մեջ. իսկ այդ տես-նում ենք ծաղկման շրջանում, վորից հետո այդ նյութերը

պակասում են, ավելանում թաղանթանյութերը և ստացված խոտը կոպիտ ու անվօրակ եղանակում:

Ωπρωγήνεις ήταν πολυτελεία της αρχαίας Ελλάδος, η οποία συνέβαινε στην πόλη της Αθήνας και στην πόλη της Θεσσαλονίκης.

## ԿՈՐՆԳԱՆԻ ՍԵՐՄԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆԸ

Կորնգանի սերմարուծությունը հատկապես Հայաստանում  
ունի մեծ հեռանկարներ, վորովհետև մեզ մոտ տարածված են  
կորնգանի ամենալավ տեսակները, վորոնք հարմարված լինելով  
մեր պայմաններին, տալիս են խոտի և սերմի ամենաբարձր  
ըերքը: Այդ կորնգաններից աչքի յեն ընկնում Սիսիանի և  
Նախիջեանի տեսակները:

Սերմ աբտազրելու համար անհրաժեշտ և նախ իմասնալ  
թե ինչպիսի սերմ ենք բազմացնում, վարտեղից և նա ստացվել-  
ինչպիսի դիմացկունություն և ցուցաբերում յերաշտի, ցրտերի,  
հիվանդությունների հանդեպ և վերջապես ինչպիսի բերք և  
առիս քանակի և պրակի տեսակետից:

Մեծ նշանակություն ունի ստացված խոտի վորակն ու քանակը. լավ վորակի խոտ և ստացվում ուժեղ թփակալվող նուրբ ցողուններ ունեցող, մազգուկներից դուրի կորնդանի տեսակներից: Բերքի քանակը կախված է բույսերի բարձրությունից, նրա թփակալվերւ հատկություններից, վաղաճառությունից, մշակության պայմաններից և այլն: Թփածու այս բոլոր հատկությունները ձիշտ իմանալուց հատու, նոր միայն կարելի յե բազմացնել տվյալ կորնդանի սերմք: Այս տեսակետից խոշոր արժեք են ներկայացնում կորնդանի տեղական տեսակները՝ Սիստանի, Նախիջևանի, Ադրբայչի և այլն. որանք տալիս են ամենամեծ քանակի և ամենառարձագանք վորակի բերք:

Մինչեւ հիմա սերմարուծությանը մեղ մոտ լայն տեղ չեւ տրվել, սերմի համար և պահիվել, յերբ ցանկացել եւ անտեսությունը: Այժմ պահանջին ձեփով կառուցվող զյուղատնտեսությունից պահանջվում է ոլլանային սերմարուծություն: Անառնապահության համար կերի բազայի հիմնաքարը կերաբույսերի սերմարուծությունն եւ որը որին աճում է կերաբույսերի տարածությունը, դրանց հարկավոր եւ սերմ հասցներ Սերմի բարձր բերք ստանալու համար անհրաժեշտ եւ, զոր հողը նախորոշ լավ մշակված լինի, միանդամայն մաքուր լինի մոլախոտերից:

գրա համար անհրաժեշտ ե աշնանից խոր վարել, դարնանը կրկնավարեց հետո փոցին ու նոր ցանելը վորքան սերմ և հարկավոր կորնդանի չ հեկտ. դաշտի համար: Անշուշտ սերմի ցանքը պետք ե լինի նոսր: Նոսր ցանված կորնդանի ցանքից ստացված սերմ և վորակով ե լավ լինում և բերքը շատ ե ստացվում: սերմի քանակն այդ դեպքում պետք ե սովորական ցանքից չով պակաս վերցնել: Մեր պայմաններում սերմ ստանալու համար 1 հեկտարի վրա պետք ե ցանել 80—100 կիլո սերմ:

Ցանքը պետք ե անպայման կատարվի շարքայնով. սերմի համար շաղացան յերեք չի թույլատրվում: Վոչ միայն շարքացանով պետք ե կատարվի ցանքը, այլ և լայն շարքերով: Մի շարք փորձակայանների փորձերը ցույց են տալիս, վոր սերմի ամենաբարձր բերքն ստացվում ե այն դեպքում, յերբ շարքային ապրածությունները միմյանցից հեռու յեն լինում՝ 40—50 ամ.:

Նման լայն սիջարքային ապրածությունների վեպքում հնարավորություն ե ստեղծվում միքենայացման յենթարկել այն բոլոր աշխատանքները, վորոնց միջացով բարձրանում ե բերքը: Հաճախակի փոցին միջարքային ապրածությունները միանդամայն վերանում են մալախոտերը: Փիրացումը հնարավորություն ե ստեղծում, վոր հողում յեղած խոնավությունը խնայողաբար սպասվի և արագ չդուրսիանա: Սերմ ստանալու համար ցանքն անպայման պետք ե կատարվի առանց ծածկոցի. ծածկոցը հաճախ տղում ե բերքի քանակի վրա, մանավանդ այն շրջաններում, ուր միջնորդային տեղումները քիչ լինելու պատճառով, հողում ել խոնավությունը քիչ ե լինում:

### ՍԵՐՄԱՑՈՒ ԿՈՐՆԳԱՆԻ ԽՆԱՄՔԸ

Սերմադաշտի խնամքն այնքան ել բարդ չե, կորնդանը չի տուժում մսասատուններից կամ հիվանդություններից: «Զիգզագ»-ով վաղ դարնանը պետք ե ցանքը մի քանի անգամ փոցինը պետք ե անել և բերքը հավաքելուց հետո: Անհրաժեշտ ե կազմակերպել նաև պարարտացման գործը. վաղ դարնանը սերմադաշտ պետք ե պարարտացնել գումարով, մոխրով կամ քիմիական պարարտանյութերով, որինակ՝ սուսպերֆոսֆատով: Անհրաժեշտ ե նաև հաճախակի փոցինը միջոցով պայքարել մոլախոտերի դեմ:

### ՅԵՐԲ ՎԵՐՑՆԵԼ ՍԵՐՄԸ

Մեզ մոտ տարածված կորնդանը մեկ անգամ ե հնձվում, յերբեմն 2 անգամ. պարզ ե, վոր առաջին տարին նրանը սերմ չեն տալիս, սերմի համար հնձվում ե յերկրորդ տարին: Մի շարք փորձակայանների փորձերը ցույց են տալիս, վոր կորնդանի ցանքից սերմ ստանալուց հետո, բոլորովին չի ազդվում հետագա տարբինների բերքը:

Կորնդանն ավելի կարճատե բույս ե, քան առվույտը. հետեւ վապես սերմ վերցվում է միայն 2—3-րդ և յերբեմն 4-րդ տարում:

Սերմի համար պետք ե վերցնել առաջին բերքը. 1 հեկտարից ստացվում է 8—12 ցենտներ սերմ:

### ԿՈՐՆԳԱՆԻ ՍԵՐՄԸ ՀԱՎԱՔԵԼԸ

1. Սովորաբար կորնդանի առաջին տարվա ցանքից սերմ չի հավաքվում, սերմ ստացվում է միայն յերկրորդ, յերբորդ և այլ տարիններին, սակայն նպատակահարմար ե մինչույն ցանքից ոգտվել սերմի համար 2 կամ 3 տարի:

2. Ծաղկման շրջանում անհրաժեշտ ե մանրակրկիտ կերպով հետևել սերմի հասունացման ընթացքին, վորովինու այդ կատարվում ե շատ արագ:

3. Կորնդանի ցանքից սերմ հավաքելու ամենաճիշտ ժամկետը հաշվվում ե այն մումենաը, յերբ ցողունների մեծ մասի ներքին ունդերը կամ պատիչները գորշ գույն են ստանում:

4. Կորնդանի համած սերմերը հեշտ են թափվում. սերմի բերքը չկորցնելու համար, անհրաժեշտ ե հավաքել շուտ և առավոտյան ցողին:

5. Հնձելուց հետո խուրձեր պետք ե կապել և մի քանի որ պահել. կիսաչոր վիճակում անհրաժեշտ ե փոխադրել կալսելու վայրը. խույս պետք ե տալ շատ չորացնելուց, վորովինու սերմ կթափվեն: Տեղափոխելիս անհրաժեշտ ե սալի մեջը ծածկել ներկենտով կամ այլ շորով, մեծ քանակությամբ սերմ չկորցնելու համար:

6. Կալսելու վայրում կորնդանը մի քանի որ ել պահվում:

7. Կալսվում ե կորնդանը սովորական կալսիչ մեքենայով,

իսկ այնտեղ, ուր չկա այդ, կարելի յե և կամերով. հետո անց կացվում քամհարով և վերջապես՝ մաքրվում սերմադաշտիչով:

8. Կորսականի սերմը մաքրելուց հետո, անհրաժեշտ և բրեգենաների վրա փոել բարակ շերտով և չորացնելու նպատակով պահել արևի տակ, խույս տալով անձրկեց և խոնավությունից:

9. Զորացքած սերմն անհրաժեշտ է լցնել նախորդք ախտահանված տպրակների մեջ և պահել միանդամայն չոր և քամու պահեստներում, փորովհետեւ վաստ և մանավանդ խոնավ պահեստներում պահած կորնգանի սերմը շուտ է կորցնում իր ծլունակությունը:

Վիկը թիթեռնածաղիկների ընտանիքին պատկանող խոռարույն է, վորը մշակվում է խոռ և սերմ ստանալու համար։ Գործեածում նաև վորովես կանաչ կեր:

Վիկի կարևոր հատկությունն այն է, վրա նա տալիս ե առնալավ վորակի, նուրբ և սննդարար կեր. Սրա մեջ բավականին մեծ քանակությամբ սպիտակուցային և առնասարակ սննդարար նյութեր են գանվում, քան մյուս խոտաբույսերի, նույնիսկ առվույտի ու կորնդանի մեջ:

Զար լեռ կանաչ վիկի ժիմիտկան կողմբ.

$\frac{Q_{np}}{U_{nk}/P_{nk}}$	$\frac{Q_{np}}{U_{np}/P_{np}}$	$\frac{U_{np}/P_{np}}{U_{nk}/P_{nk}}$	$\frac{U_{nk}/P_{nk}}{U_{np}/P_{np}}$	$\frac{\delta_{np}}{\delta_{nk}}$	$\frac{\delta_{nk}}{\delta_{np}}$	$\frac{P_{nk}/U_{nk}}{P_{np}/U_{np}}$	$\frac{P_{np}/U_{np}}{P_{nk}/U_{nk}}$	$\frac{U_{nk}/P_{nk}}{U_{np}/P_{np}}$
2400 1000	83,5	14,2	2,5	25,5	32,8	8,5		
9000 1000	17,6	3,8	0,6	9,0	5,5	1,7		

Վիկր հողերի նկատմամբ առհասարակ պահնոնցին չե. առ ից հողեր կան, վարել վիկր դժվարությամբ անի (այսպէս որինակ՝ շատ խոնավ կամ շատ ծանր կավային հողերը):

Վիկը հացարույսերի համեմատությամբ աշխաղ զարդարություն  
արմատներ ունի, վրոնք ամելի լավ են ոգտագործում հողի մեջ  
յեղած հանքային նյութը: Վիկի արմատների վրա կան մեծ քա-  
նակությամբ պալարիկներ, վրտակ գոնվում են բազմաթիվ բակ-  
տերիաներ, վորոնք նոյն ազուր պարարտացնելու ինք բռնյափն  
ազուր սնելու գործում մեծ դեր են կտարաւ: Մեզ մոռ՝ Հա-  
յառատանում վիկի մշակությունը նոր է, չնայած մեր թուլու շըր-  
ջառատանում ցիկլի մշակությունը մեջ հանդիպում ենք վիկի բազմա-  
թիվ մոլախոտային տեսակների, վորոնց գյուղացիք «գայլուկ»  
անունն են տալիս:

Վիկն ունի բազմաթիվ տեսակներ՝ գարնանացան և աշնանացան, —սովորական վիկ, թափոտ վիկ և այլն. թափոտ վիկը սովորական վիկից տարբերվում է նրանով, վոր նա ունի վողկույցաձև ծաղկաթթություն, ամբողջ բույսն ընդհանրապես ավելի մաղու է, իսկ սերմերը՝ մանր. Թափոտ վիկը, սովորականի հետ համեմատած, ավելի յև քննելացած հողային յել չոր կլիմայական պայմաններին:

Բուսեռում և համեմատաբար լավ և զարգանում նույնիսկ աշազուած հաղերում. Թափոտ վիկը մշակում են ավելի աղբա հօղերում. սրա աչքի ընկնող հատկություններից մեկն ել այն և, վոր սրա մեջ կան տեսակներ, վորոնք կարելի յե ցանել և աշնանը և գարնանը. Թափոտ վիկը շատ քիչ և տաժում ստուամանիներից, վորը հնարավորություն և տալիս նույնիսկ լեռնային շրջաններում մըշակելու. Որուսասանի բազմաթիվ փորձադաշտերը ցույց են տալիս, վոր թափոտ վիկը դիմանում է նույնիսկ 20—25 աստիճան ցրտերին. Չսայած կարելի յե ցանել նաև գարնանը, բայց ձեռնտուչի, ավելի քիչ բերք և տալիս, քան աշնանը ցանելու դեպքում:

### ՎԻԿԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Վիկն առատ յել լավ վարակի բերք և տալիս, (մեկ հեկտարից 40—50 ցենտներ չոր խոտ) և աղահովում և տնտեսությունը մեծ քանակությամբ կերպով.

2. Մեր չոր յերկրագործական շրջաններում, վորտեղ տնտեսություններն ստիպված են ամեն տարի հողերի վորոշ մասը թողնել ցելահող—խոնավություն և այլ նպաստավոր պայմաններ առեղջելու համար, նաև ցելահողերից այդ տարին բերք չի փերցվում. Վիկը ննարավուրելու և տալիս ոգտագործել նման ցելահողը:

3. Մեզ մոտ թափոտ վիկի աշնանացան տեսակը գարնանը՝ տպրիին կամ մայիսին, ննձելու համար արդին պատրաս և լինում, շենց այդ ժամանակն ե. վոր տնտեսության խոտի պաշարը վերջանում և, իսկ վիկն ոգնության և գալիս:

4. Վիկը ծիկուց մինչև հնձելը տեսում է 55—65 որ. այս հանգամանքը թույլ և տալիս մեզ, հացահատիկները հնձելուց հետո, տեղը վիկ ցանել և մինչև աշնան ցրտերը հնձել. ի հարկե խոսքը վերաբերում է նախալեռնային շրջաններին. Կարելի յե այլ կերպ ել վարպետը: Աշնանը վիկը ցանել վաղ գարնանը հնձել և

տեղը ցանել ընդհանրապես ուշ ցանվող մշակույթներ (որինուկ՝ կաղամբ, ճակնդեղ, նույնիսկ ծխախոռ). այդ բոլորը հնարավոր և նախալեռնային և չոր լեռնային շրջանների ջրովի հողերում (որինակ՝ կոտայքում, Դարալագյաղում, Զանգեզուրում և այլն):

Այսափառվ, օնորիիվ վիկի մշակուրիան, միեվնույն հողամտուց մի ամսովա բնացերում կարելի յե վերցնել 2 բերք:

Վիկի սերմերը շատ հարաւա են սննդանուրերով. ուրիշ ահագի սերմերը շատ հարացնելով կերակրում են անասուններում վիկի սերմերը մանրացնելով կերակրում էն անասուններին: Անհամաժեշտ և նույնիսկ մեղ մոտ վիկի սերմն ոգտագործել պրապես կեր:

### ՎԻԿԻ ՏԵՂԸ ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Վիկը մեծ նշանակություն ունի այսպիս կոչվող կերի ցանքաշրջանառությունում: Ամենահարմար բույսն ե զբաղվող ցելերի համար:

Հին գյուղը կարծում եր, վոր ցելը հանդատացնում է հողն վերականգնում նրա ուժերը. այդ ճիշտ և, բայց վոչ անհրաժեշտ: Հողի ուժերը վերականգնելու, նրա ֆիզիկական հատկությունները լավացնելու, նրանում խոնավությունն կուտակելու և թյունները լավացնելու, նրանում խոնավությունն կուտակելու և վերջապես կնձկային կառուցվածք ատեղջելու գործում վոչ միայն միջոցով և հնարավոր այդ բույրն ստեղծել, այլ դրան կարելի ցելի միջոցով և հնարավոր ատեղջել, ամ դրան կարելի համանել ճիշտ և ժամանակին հողի մշակությամբ, ճիշտ ժամանակին պարարտացմամբ և ճիշտ ցանքաշրջանառության կիրառությունիւնիացում, վորտեղ ցելը միայն ցանքերի 1—2% և մամբ գիրմանիացում, վորտեղ ցելը միայն ցանքերի 1—2% և անզամ բարձր և բերքը քան մեղ մոտ համանում և այստեղ խնդիրը ցելը չի, վորի տոկոսը մեղ մոտ համանում և 25—30%-ի և վորը հաճախ վատ մշակման հետևանքով դանում և մոլախոտերի ոջախ, այլ այն, թե ինչ միջոցով և ինչպես կարելի յե հողի վորակը լովացնել, վերականգնել նրա բերքատվությունը, ինչ վիկը վորակը լովացնել նրա մեջ սննդարար նյութեր: Հողը կարելի յե պակուտակելով նրա մեջ սննդարար լովացնել գոմաղբով, հանքային պարարտացնյութերով և լազմակելով ստեղծել նախատավոր միջավայր բույսերի գարգացման համար: Վիկը և նման բույսերը (լորիս, սոյան, մաշը և այլն) կարամար: Վիկը և նման բույսերի միջոցով հարստացնել հողն ազտուվը ըսող են իրենց արմատների միջոցով հարստացնել հողն ազտուվը ողի անսպաս աղբյուրի հաշվին: Ուրիշն, յեթե վիկը լովացնում է հողի վորակը, հարստացնում և ազտուվը ու հաջորդ բույսի բերքն ավելացնում, ապա պիտք ե բոլոր հողերը, վորոնք թողնվում են

գորակս ցել, զրադեցնել վիկով: Այսպիսով ցանքաշրջանության մեջ մենք աղատ հող չենք ունենա և մեկ տարվա հողի բնրքից ել չենք վիկի:

Վիկի դաշտից հետո կարելի յե ցանել միայն գարնանացան, իսկ խոնավ շըջաններում նաև աշնանացան և ընդհակառակ՝ վիկը կարելի յե ցանել թե աշնանացանից և թե գարնանացանից հետո: Այդ բացարձիւմ և նրանով, վոր վիկը վորպես աճման կարճատե շըջան ունեցող բույս, կարճ ժամանակ և զրադեցնում հողը, վորը հավաքերուց հետո, հնարավոր և լինում հողը նախապատրածել այս կամ այն կուլտուրայի համար:

Վիկի սերմերի յեվ ստցված դարմանի բիմբական կազմն ըս կյունիկի

	Զոր էլեմենտ	Սուլուս կուղի էլեմենտ	Համար էլեմենտ	Համար էլեմենտ	Համար էլեմենտ	Բարձրա- կան էլե- մենտ	Մուլտ
Սերմե . . . . .	86,4	27,5	2,3	6,7	47,2	2,7	
Դարմանը . . . . .	85,4	7,0	2,0	42,6	28,1	6,0	

Այս թվերը ցույց են տալիս, թե վորքան հարուստ և վիկի սերմն սպիտակուցային նյութերով, վորոնք խոշոր նշանակություն ունեն անառուների սննդի համար:

### ՎԻԿԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Վորովհետեւ վիկի ցողունները կանգուն չեն, ուստի վիկը ցանում են սովորաբար վորեն հացարույսի հետ, աշնանացանի գեպքում աշորայի հետ, գարնանաշանի դեպքում վարսակի կամ դարու հետ: Առանց հացարույսի վիկը պառկած ե, խճճված, լավ չի զարգանում, լավ սերմ չի տալիս, ցածրի տերեններն սկսում են փառել, դժվար են ճնձում:

### ՀՈՂԻ ՆԱԽԱՐԱՐԱՍՏՈՒՄԸ

Բոլոր մշակովի բռյուններն իրենց սորմալ զարդացման համար պահանջում են՝ լույս, ջերմություն և սննդաբար նյութեր: Այդ պայմաններից ե կախված բռյուսի բարձր բերքը: Յեթե մենք կանոնավոր մշակենք հողը, մտցնենք այնտեղ պահանջված պարագատանութերը և ժամանակին ու կանոնավոր ցանենք, կարող ենք մեր ցանկացած բարձր բերքը վերցնել:

Վիկի համար անհրաժեշտ ե աշնանը կատարել խոր վար: Աշնանացան թափուտ վիկ ցանելու համար, հողը վարվում և հացահատիկները հնձելուց հետո գարնանացան վիկի հողը վարվելու յերգածյալ աշնանը, վորպեսզի ձմեռվա ընթացքում անհրաժեշտ քանակությամբ խոնավություն կուտակվի: Եսա տեղերում վիկ ցանելու համար խույս են տալիս աշնանավարից, բայց յերկարաժամկեր ցույց են տալիս, վար տեսանատուրի դեպքում բերեք բարձրանում և 30% -ով: Աշնանավարից հետո գարնանը հողը փոցիում են, հետո նոր միայն ցանում: Լավ պիտի հիշել, վար տօնան վարից յեկ գարնան փոցիներց և կախված վիկի բարձր բերեք:

### ՎՈՐՔԱՆ ՍԵՐՄ Ե ՀԱՐԿԱՎՈՐ ՄԵԿ ՀԵԿՏԱՐԻՆ

Դա կախված ե նրանից, թե ինչ նպատակի համար ենք ցանում: Յեթե սերմ ստանալու համար ե, նոսր պիտի ցանել: Դրա համար պիտի սերմը քիչ վերցնել, իսկ յեթե խոտ ստանալու համար—խիտ ե ցանվում, սերմը շատ և վերցվում: Բացի այդ՝ սերմի գառնակը կախված ե մի շարք պայմաններից, ինչպիսին են՝ հողային, կլիմայական, սերմի ծլունակության և այլն:

Մեկ հեկտարի համար սովորաբար վերցվում է 160—192 կիլո սերմ, վորի  $\frac{1}{3}$  մասը (48—64 կիլո) հացահատիկ՝ աշորա, վարսակ սերմի կամ գարեի, իսկ  $\frac{2}{3}$  մասը (112—128 կիլո) վիկ:

### ՑԱՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Պետք ե նշել մի հանգամանք, վոր վիկը չի վախենում ցըրտից. Արա ծիլերը դիմանում են նույնիսկ 3—4 տասինան ցրտի, այդ պատճառով ել կարելի յե ցանել շատ վազ: Ուռւսաստանի գայլ պատճառով ել կարելի յե ցանել շատ վազ: Աշնանացանի դեպքում ցանվում ե ոգոսուրովին չի տուժում: Աշնանացանի դեպքում ցանվում ե ոգոսուրովին կամ սեպտեմբերին Գարնանացանի դեպքում, վաղ գարնանը՝ սին կամ սեպտեմբերին վինի դաշտ գուրս գալ: Վորքան շուտ ցանվի հենց վոր հնարավոր մինի դաշտ գուրս գալ: Վորքան շուտ ցանվի վիկը, թե աշնանը և թե զարնանը, այնքան ավելի հաջող կլինի վիկը, վաղ գարնանացանի դեպքում հնարավորություն և ըստեղծվում աղատ բանքը վերջացնել այն ժամանակի, յերբ անտեսությունում աղատ բանքը վերջացնել շատ կան:

### ՑԱՆԵԼՈՒ ԶԵԿԸ

Հերկի տեսակետից վիկն այնքան ել պահանջվում չի, վորի պատճառով ել, յեթե հողն աշնանից հերկված ե լինում, աղատացան մեր ժամանակ կրկնակերկ չի արվում, այլ բավարարվում են նելու ժամանակ կրկնակերկ չի արվում, վար գարնանացանի դարձարվությունը համար աղատ բանքը վերջացնել:

միայն փոցինելով։ Վիկը շարքացանով և ցանվում։ Կարելի յե ցանել շ ձևով—յեթե դաշտի զիրքը թույլ և տալիս—մի ուղղությամբ ցանում ենք հացահատիկ, հակառակ ուղղությամբ՝ վիկ։ Այդ գեղքում կրկնապատկում և աշխատանքը. կարելի յե ցանել ահա ինչպես շարքացանի արկղը բարակ տախտակներով բաժանում ենք ըստ անշքերի, ստացված մասներում առանձին-առանձին լրցնում ենք վիկի և հացահատիկի սերմեր և արդյունքը լինում և այս, վոր մի շարքը ցանվում և վիկ, մյուսը՝ հացահատիկ։ Զի կարելի յերբեք շարքացանելու գեղքում նախորդ խառնված սերմ ցանել—գորովհետեւ վիկի և վարսակի խառնուրդի գեղքում նախ կցանվեն վիկի սերմերը, հետո վարսակի—և արդյունքը լինի, այս, վոր դաշտի մի մասը կցանվի մաքուր վիկ, մյուսը՝ մաքուր վարսակ։

Յեթե հողամասի զիրքը թույլ չի տալիս ցանքը կատարե շարքացանով, այդ գեղքում՝ հողից չզրկվելու համար, ցանքը կատարում ենք շաղացան։ Այս գեղքում սերմերը դարձյալ չեն խառնում, այլ նախ մեկ ուղղությամբ վիկի սերմերն են շաղ տալիս, հետո խաշաճե ուղղությամբ հացահատիկի սերմերն ու նոր փոցինում. այս գեղքում ավելի հավասար ցանք և ստացվում։ Այսուհետեւ վիկն առանձին խնամք չի պահանջում։ Մեր յերկրի տաք կլիմայական պայմաններում, նախալեռնային շրջաններում վիկի ցանքերը վասամք ջրելու կարիք են գումար, իսկ լեռնային շրջաններում, մանավանդ յեթե աշնանացան թափուր վիկ ենք ցանել, ջրելու կարիք չկա։

## ՎԻԿԱ-ԱՇՈՐԱՅԻՆ ԽԱՌՆՈՒԻՐԴԸ

Գիտենք, վոր վիկն առանձին չի կարելի ցանել, ըրա համար ել ցանում ենք մի վարևե հացահատիկի հետ միասին։ Աշորայի դեղքում վարվում ենք հետեւյալ ձևով. հենց վոր դաշտն աղատում և այս կամ այն բույսից, որինակ հացահատիկներից, անմիջապես վարում ենք հողը և կատարում աշնանացան վիկի և աշորայի ցանքը։

Ցանքը կատարվում և, յերբ հողում անհրաժեշտ քանակությամբ խոնավություն կա և վոչ ուշ, քան ոգոստոսի 10—15-ը։

Վերցնում ենք վիկի սերմ 60—90 կիլո, իսկ աշորայի 30—45 կիլո։ Ժամանակին կատարած նման ցանքը վաղ գարնանը տալիս և տնտեսությանն ահագին քանակությամբ կանաչ կեր։

Պետք ե առաջին հունձը կատարել այն ժամանակ, յերբ աշորան սկսում և ցողուններ զցել—մինչեւ հասկերի յերեալը։ Այդ ժամանակ հնձած աշորայի ցողունները շատ նուրբ են լինում, և անասունները մեծ ախորժակով են ուտում։ Յերկրորդ անգամ հնձում ենք հուլիսին կամ ոգոստոսին։ Այսպիսով յերկու անգամ բերք վերցնելուց հետո, միանգամայն հնարավոր և լինում հողը նախապատքաստել հաջորդ կուտուրայի համար։

## ՎԻԿԱ-ՎԱՐՍԱԿԱՅԻՆ ԽԱՌՆՈՒԻՐԴԸ

Այս ձեմի խառնուրդի ցանքի ժամանակը կախված է ցանքի նպատակից, կանաչ կերի համար և ցանվում, թե չոր խոտի համար։ Կանաչ կերի համար ցանքը կատարում ենք վոչ միանգամբց, այլ տարբեր դաշտեր տարբեր ժամանակը, յուրաքանչյուր 10 որը մեկ, վորպեսզի տնտեսությունը միշտ ապահոված լինի կանաչ կերով։

Չոր խոտի համար ցանքը կատարում ենք այն ժամանակը, յերբ սկսում են վարսակը ցանել. պետք ե վերցնել 1 հեկտարին 100—120 կիլո վիկա և 50—60 կիլո վարսակ։ Յերբեք վիկի սերմը 2 անգամ վարսակի սերմից ավել կամ պակաս չպետք ե լինի, վորովհետեւ իրա լինելու գեղքում, խոնավ յեղանակներին ուժեղ աճելով, կպառկի, իսկ քիչ լինելու գեղքում—չոր յերաշտ յեղանակներին, կարսղ և շուտ չորանալ, հանաչ կերի համար բերբը հավաքում են այն ժամանակը, յերբ վարսակն արձակում և հուրաններ, իսկ վիկն սկսում և ծաղկել։ Չոր խոտի գեղքում յերբ վիկը լրիվ ծաղկած ե լինում, իսկ վարսակը լրիվ արձակած ե լինում հուրանները։

Հնարավոր ե 2 անգամ հնձել այն գեղքում, յերբ առաջին քաղը կատարում ենք նախ քան վիկի լրիվ ծաղկելը, վորից հետո վիկը նորից զարգանում ու տալիս և յերկրորդ քաղը։ Իսկ յերբ առաջին քաղը կատարում ենք լրիվ ծաղկելուց հետո, այն ժամանակ վիկը հնձից հետո թույլ և զարգանում։ Վիկա-վարսակային խառնուրդը բարեհաջող պայմաններում տալիս ե 2,5—6 տոնն խոտ։

## ՎԻԿԱ-ԳԱՐՈՒ ԽԱՌՆՈՒԻՐԴԸ

Այս ձեմի խառնուրդը մեղ մոտ՝ հայաստանում, ավելի մեծ նշանակություն ունի, քան մնացած ձևերի խառնուրդները, վորովհետեւ վարսակն ավելի ջերմություն սիրող ե, քան գարին, վորի

պատճառով ել շատ բարձր շրջաններում չի աճում, մինչդեռ զարին աճում ու լավ բերք ե ատլիս լինային շրջանների նույնիսկ ամենաբարձր գյուղերում: Այդ շրջաններում ցանում ենք վիկա-գարու խառնուրդ: Հողի նախապատրաստումը, սերմի ֆանակը և այլն, նույնն ե, ինչ վարսակի դեպքում: Հատկապես սերմի համար ցանքերը սետք ե անպայման ցանվի դարու հետ:

## ՀՆՁԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Վիկը հնձվում ե, յերբ բույսերը լրիվ ծաղկած են լինում: Վիկը կարելի ուշացները թե չե կոսիս կեր կստացվի: Հնձելու ժամանակը կախված ե նաև յեղանակներից: Խնդիրն այն ե, վոր խոտը չորացնելիս, յեթե 2—3 որ մնում ե արևի տակ, կորցնում ե իր չոր նյութերի մինչև 40°/օր: Ինչ խոսք, վոր անձրևոտ յեղանակներին նույն ժամանակաշրջանում այդ կորուստը շատանում է հասնում և մինչև 100°/օրի: Վիկը խոտի նըրությունը և պիտանիությունը պահպանելու համար, անհրաժեշտ է չորացնելու մասին մտածել: աշխատել, վորպեսզի քիչ մնա արևի կամ անձրևի տակ, հավաքելիս ի նկատի պիտի ունենալ, վոր քիչ թափվեն ծաղիկներն ու տերևները, վորովհետև այնտեղ են կուտակված սննդարար նյութերը:

Այն խոտը, վորը հավաքվել ե լավ յեղանակներին ու քիչ ե մնացել դաշտում, ունենում ե անսունների համար դռւրեկան հոտ և ախորժակով են ուտում, քան այն խոտը, վոր շատ ե մնացել դաշտում:

## ՍԵՐՄԱՑՈՒ ՎԻԿԻ ՑԱՆՔԸ

Վիկի սերմ ստանալը մեզ մոտ մեծ նշանակություն ունի: Որը որին աճում ե ցանքի տարածությունը: Ընդհանուրապես մինչև հիմա վիկի սերմի խոշոր մասն ստացել ենք դրսից: այդպես շարունակել չենք կարող, վորովհետեւ նախ—փոխադրությունները թանգ են նստում, և ծանրաբենում են մեր յերկաթգծի առանց այն ել ուժեղ բեռնվածությունը, յերկրորդ՝ վիկի պահանջը հարեւ վան և մյուս հանրապետություններում այն աստիճանի մեծ ե, վոր այդ հանրապետություններում հաղիվ կարող են բավարարել իրենց պահանջները: Շատ անգամ ե պատահել, վոր մեր վիկի ցանքերի պլանը չենք կարողացել կատարել սերմ չունենալու

պատճառով: Այս ամենն ստիպում են մեզ վիկի սերմաբուծության վրա մեծ ուշադրություն դարձնել տեղում, մեզ մոտ:

Սերմ ստանալու համար հողը պիտք ե լավ մշակված լինի դեռ աշնանից, գարնանը կրկնավար արվի, փոցլիվի ու նոր ցանվի, իսկ թավոտ վիկը պիտի ցանել աշնանը:

Սերմի ցանքի համար սովորաբար վերցնում են 140—160 կիլո վիկի խառնուրդը, վորի 90—100 կիլոն վիկ, իսկ 50—60 կիլոն գարի: Ցանքը պիտի կատարել անպայման շարքացանով:

## ՎԻԿԻ ՍԵՐՄ ՀԱՎԱՔԵԼԸ

Վիկի սերմը չափեց դուրս գանդաղ և հասունանում: յերբ ներքեւ ունկերը կամ պատիչները հասունացած են լինում, վերին մասում դեռ ծաղիկները են գտնվում: Վորպիս վոչ միաժամանակ ծաղկող բույս, պատիճները կամ պատիճները հասունանան, վորովինեան վերեկի սերմերը հասունանալիս ներքենիներն արդեն վաղուց հասունացած են լինում, բացւում և սերմերը միջից թափվում են:

Վիկի սերմերի հասունանալը նկատվում ե, յերբ պատիճների կամ ունկերի 50°/օրից ավելին սկսում են զորշանալ: Ծորանար: Սերմացու վիկը հարում են կամ հնձող մեքենայով կամ ձեռքով (գերանդի, մանգաղ): Հնձված վիկը «թափուլներ» են անում (կույտեր են անում) և 2—3 օրից հետո տեղափոխում են կալսելու վայրը: Կալսվում ե կալսիչ մեքենայով, կամ՝ սովորական կամերով: Քամհարում են սովորական ձեռվի: Ստացված վիկի խառնուրդը ըստում են գարուց, աշորայից կամ վարսակից սերմաղտիչ մեքենաների միջոցով: Այսպիս անա ստացվում ե վիկի մաքուր սերմը: Ստացված սերմերն արեի տակ լավ չորացնելուց հետո, տեղափում են նախորդը ախտահանված մաքուր և չոր պահեստներում:

Պահեստներն անպայման պիտք ե չոր լինեն, վորովինեան խոնավ պայմաններում վիկի սերմերը հեշտությամբ բորբոսուում են, իսկ նման սերմերն անշուշտ կորցնում են իրենց ծլունակությունը:

## ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ՉՈՐ ԽՈՏԸ ՁՄՌԱՆԵ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ժամանակին հնձած, լավ չորացրած խոտը, դեռ ևս չի յերաշխավորում տնտեսության կերն ապահովելու գրությունը: Ամբողջ տարվա աշխատանքն ի դուր կանցնի և անասունները սովի կմատնվեն, յեթե տնտեսությունն այդ բոլորի հետ միասին չըկազմակերպի խոտի պահպանումը: Այդ հասարակ խնդիր չե, մասնավանդ խոշոր խորհրդային և կուեկտիվ տնտեսությունների համար: Դրանից ե կախված ամբողջ անասունների բաղդը ձմեռվա ամիսների ընթացքում: Նախ քան պահպանման կոնկրետ ձևերի մասին խոսելը, անհրաժեշտ է հիշել մի կարևոր հանգամանք, որ խոտի լավ չորացնելն ե. անգամ չնշին խոնավությունը խոտի դեղում—առաջացնում ե այսպես կոչվող «այրում»: Դրա պատճառը հետեւյալում ե. չորացրած խոտի տերենների և ցողունների վրա ապրում են բազմաթիվ բակտերիաներ, վորոնք հասարակ աշքով անտեսանելի յեն: Այդ բակտերիաները խոտին վոչ մի վնաս չեն հասցնում չոր և շատ ցուրտ պայմաններում:

Խոտը խոնավ լինելու դեպքում (անձրենից կամ ձյունից) այդ բակտերիաների համար ստեղծվում են նմանատավոր պայմաններ. սրանք սկսում են արագ դարձանալ. վատ չորացրած խոտը բակտերիաների դործունեցության հետեւնքով սկսում ե տաքանալ, բորբոսնել, փտել: Ահա ինչու պետք ե խոտը լավ չորացնել և այնպես պահել, վոր չխոնավանա:

Խոտը յերկու ձևով են պահում՝ քացողյա և ծածկոցի տակ: Բացողյա պահելն այն շըջաններում ե ձեռնտու, վորտեղ ձմեռը մթնոլորտայինն տեղումներ քիչ են լինում: Մեզ մոտ՝ Հայաստանի անասնապահական շըջաններում, բոլորովին ձեռնտու չե խոտը ձմեռը բացողյա պահել: Ահա ինչո՞ւ.

1. Տարիների փորձը ցույց ե տալիս, վոր բացողյա պահած խոտն անհամեմատ ավելի մեծ կորուստ ե տալիս. այդ կորուստի պատճառներն են մթնոլորտայինն տեղումները, (անձրեն, ձյուն), քամին, արևը և այլն: Որինակ Տեմիրյազեի անվան գյուղատնտե-

սական ակաղեմիային կից ֆերմայի 25—26 տոննանոց խռովի դեղից ձմեռվա ընթացքում փչացել եր 2—3 տոնն, վորը կազմում է 12°/0. ավելի խոնավ տարիներում այդ կորուստը հասնում է մինչև 30°/0ի:

2. Բացողյա խոտը վոչ միայն քանակով ե վչանում, այլ և նրա վորակն ել սոսկալի կերպով վատանում ե: Կորցնում ե կանաչ գույնը, վատ համ և ստանում և այլն, այնպես, վոր անուսուններն ախորժակով չեն ուտում:

3. Անասնապահական շըջանների տնտեսությունները խոտհարքը կատարում են տարբեր ժամանակ. որինակ ներքեմի հողամասերում ավելի շուտ են հնձում, քան վերևի: Տարբեր կերպույսեր տարբեր ժամանակ են հնձում: Ստացած խոտն առանձին առանձին շատ քիչ ե դեղ կազմելու համար, ստիպված սկսած ի լինենք փոքրիկ դեղեր պահել:

Այդ բոլոր բացասական յերևույթները չի նկատվում խոտը ծածկոցի տակ պահելու դեպքում: Ծածկոցի տակ պահպանված խոտը չի փշանում—չի բորբոսնում, չի կոշտանում, չի կորցնում իր համն ու գույնը:

Ծածկոցները լինում են 2 տեսակի: Սովորական՝ առանց պատերի և հասարակ ամբար, Յերկու ձևն ել տնտեսության վրա շատ եժան են նստում, յեթե ի նկատի ունենանք այն խոշոր կորուստը, վոր ստանում ե տնտեսությունը բացողյա պահելուց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

b2

ԼՐԱՉԱԲՈՒՆ	3
ՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԽՈՏԱՅԱՆՈՒԹՅՈՒՆԸ	7
ՈՒՎՈՒՅՑ	10
Առվույտի տեղը ցանքաշրջանառության մեջ	13
Առվույտի մշակությունը	15
Վարի խորությունը	17
Հողի նախապատրաստումը	»
Դաշտը պարարտացնելը	»
Վորքան սերմ և հարկավոր մեկ հեկտարին	18
Առվույտը ցանել շարքացանով	19
Խոտի քաշը տոկոսով	20
Շարքացանի կանոնավորումը	21
Ինչպես պիտի կանոնավորել շարքացանը	»
Յանելու ձեռք	23
Ինչ խոռությամբ պիտի ցանել	24
Խնամքը	»
Ա. պայքար մոլախոտերի գեմ	25
Բ. ջրելը	»
Դ. փողինելը	»
Պարարտացումը	26
Հանքային պարարտանյութեր	27
Առվույտի ֆնաստուները	28
Առվույտի հնձի ժամանակը	30
Սերմ ստանալը	31
Վոր հնձից պետք և սերմ վերցնել	33
Առվույտի սերմը հավաքելը	»
Առվույտի կալսելն ու զտելը	»

55

ԿՈՐՆԳԱՆ	35
Հողի նախապատրաստումը	36
Ցանելու ժամանակը	37
Ցանելու ձևը	»
Ինչ խորհռվթյամբ ցանել	»
Խնամքը	38
Հնձի ժամանակը	»
Կորնդանի սերմարուծությունը	39
Սերմացու կորնդանի խնամքը	40
Ցերք վերցնել սերմը	41
Կորնդանի սերմը հավաքելը	41
<b>Վ. ի կ</b>	<b>43</b>
Վիկի մշակութան նշանակությունը	44
Վիկի տեղը ցանքաշրջանառության մեջ	45
Վիկի մշակությունը	46
Հողի նախապատրաստումը	»
Վորքան սերմ և հարկավոր մեկնեկարին	47
Ցանելու ժամանակը	»
Ցանելու ձևը	»
Վիկա-աշորային խառնուրդը	48
Վիկա-վարսակային խառնուրդը	49
Վիկա գարու խառնուրդը	»
Հնձի ժամանակը	50
Սերմացու վիկի ցանքը	»
Վիկի սերմ հավաքելը	51
<b>Մի բնի ԽՈՍՔ ԶՈՐ ԽՈՏՔ ԶՄՈՒՆՔ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ</b>	<b>52</b>



«Ազգային գրադարան



NL0291837

18.8.91

ԳԻՒԸ 70 ԿՈՐ.



A. МАТЕВОСЯН

**СЕЯННЫЕ ТРАВЫ**

---

Сельхозгиз

1934

Эривань